Azg Ազգ

8 ՅՈՒԼԻՍ 2011 ՈՒՐԲԱԹ 125(4744)

ISSN: 1829-1651

Մեռյալ սեզոն

ՄԱԲԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱԿ-ի հաջորդ հանրահավաքը նշանակված էր օգոստոսի 1-ին: Չգիտենք, թե էլ ի՞նչ պիտի ասեն կամ անեն ՀԱԿ-ի ղեկավարները՝ ժողովուրդ հրապարակ բերելու եւ դասարկ հույսերով կերակրելու համար, էլ ի՞նչ ֆոկուսներ ու հնարքներ պիտի բանեցնեն, սակայն միայն այն փաստը, որ օգոստոսի 1-ը մեռելոց է, արդեն որոշես մեռած հանրահավաքային սեզոնի խորհրդանիշ հասկանալի է, իսկ ուշացումով օրվա խորհուրդը ՀԱԿ-ականների հիշելն ու հանրահավաքի օրը տեղափոխելը իրերի դրությունը բոլորովին չի փոխում: Սեզոնն արդեն մեռել է եւ տեխնիկապես, եւ հասկապես օդում առկա անորոշությունների պատճառով: Իսկ օգոստոսի 2-ին հանրահավաքի կանչելով՝ իրեն միակ ընդդիմություն հայտարարած կառույցը ընդամենը մի ավելորդ անգամ շոգին մարդկանց մարմինն ու հոգին կսանջի՝ կրկին հիշեցնելով, որ այդպես էլ գործ չարվեց եւ ընդհանրապես՝ թանձրացավ անորոշության մշուշը ընդդիմադիր ձեւաչափի շուրջը:

Եթե հեռ ենք նայում անցած տարիներին՝ նախագահական եւ խորհրդարանական հեսընտրական շրջանին, հասկանում ենք, թե որքան իզուր ժամանակ անցավ փաստորեն, խաղաղության եւ կայունության ի՞նչ շրջան կորցրինք ազգովին՝ առանց լուրջ ձեռքբերման, առանց

ժողովրդի կյանք բարելավելու, առանց պետության տնտեսական դիրքերն ամրապնդելու: Ղարաբաղի հարցում իրական լարվածություն, այո, չեղավ, եւ վաս բանի սպասման, դրանից զգուշանալու վրա ծախսված ժամանակը շատ ափսոս էր: Փաստորեն՝ այն ամենօրյա պատրվակը, թե ղարաբաղյան ճակատում վաս բան կլինի, բարելավում մի պահանջք, դրանով ենք զբաղված, ու այդպես ձեռքներս ծալած-նստած էինք, դուրս եկավ դատարկ բան. տնտեսությունը մնաց բլած վիճակում, մարդկանց խնդիրների մեծ մասը չլուծվեց, ժամանակն էլ՝ չվող թռչուն, ոչ հեռ բերել կլինի, ոչ էլ կուտակված խնդիրների լուծումը մի հրաշքով կունենանք: Հիմա այդ վիճակում մտնելու ենք նոր քաղաքական սեզոն, որին այս անգամ իսկապես կարող է զուգահեռվել ղարաբաղյան խնդիրը ճնշումներով լուծելու փորձերը:

Հիմա անզեն աչքով եւ ոչ մասնագետի համար էլ տեսանելի է, որ ղարաբաղյան հարցը հասցաս ինչ-որ հանգվանի մոտենում է: Բայց դրանով զբաղվողները շատ լավ գիտեին, որ ոչ մեկ տարի առաջ, ոչ երկու տարի առաջ այդ հանգվանը մոտ չէր, լուծման պարտադրանք չկար, մինչդեռ փոխանակ զբաղվեին երկիրը կարգի բերելով, ձեւ էին անում, որ այդ հանգվանը շատ, շատ մոտիկ է, վա՜յ, պատերազմը միշտ մեր քթի տակ է, ու դա կապում է ձեռքերը, թույլ չի տալիս ողջ թափով ջանք թափել երկրում կուտակված խնդիրները լուծելու:

Տես էջ 2

Նախկան Բաֆու մեկնելը Լավրովը Երեւանում է

Երեկ երեկոյան Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը աբխազական այցով ժամանեց Հայաստան: Այցի ընթացքում նախատեսված են Սերգեյ Լավրովի հանդիպումները Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից:

Հիշեցնենք՝ հուլիսի 5-6-ը Լավրովի հրավերով Մոսկվայում էր ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Հանդիպումից հետո Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը հայտարարեց. «Նախագահ Մեդվեդեւը վերլուծել է կազանյան հանդիպումից հետո ստեղծված իրավիճակը եւ մոտ ապագայում քայլեր կձեռնարկի»: Թերեւս Լավրովի այցելությունը Երեւան հենց այդ «քայլերը» ներկայացնելու միտում ունի, մանավանդ ավելի վաղ հայտնի էր դարձել, որ առաջիկայում սպասվում է ՌԴ ԱԳ նախարարի այցելությունը Բաֆու: Հ. Ա.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ԵՄ-ի վերջնաժամկետը Հայաստանին եւ Ադրբեջանին՝ «մինչեւ տարեվերջ»

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Չնայած ամենաբարձր մակարդակով արված հորդորներին, հունիսի 24-ի Կազանում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումից ակնկալվող բեկումը չնյութականացավ: Այսպիսի գնահատականով է հուլիսի 6-ին Եվրոխորհրդարանի առաջ ելույթ ունենալիս ղարաբաղյան հարցի մասին արտահայտվել Եվրոմիության արտաքին եւ ավտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ **Քաթրին Էշթոնը**:

Ստրասբուրգում տեղի ունեցող Եվրոխորհրդարանի հերթական նստաշրջանում ներկայացված իր խոսքում, ըստ ԵՏ կայքէջի, Էշթոնը ներկայացրել է, որ Նիժնի Նովգորոդում հունիսի 9-ին տեղի ունեցած Ռուսաստան-Եվրոմիություն համաժողովում ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ հանդիպմանը վերջինս բավականին լավատես է եղել Կազանում բեկում արձանագրելու առնչությամբ: Ընդ որում, այդ ժամանակ էլ ԵՄ բարձրագույն ղեկավարությունը Մեդվեդեւին հստակորեն հասկացրել է, որ ամբողջապես աջակցում է նրա անձնական միջնորդական ջանքերին, ինչպես նաեւ Մինսկի խմբի աբխազանին:

«Բայց Ադրբեջանի նախագահ Ալիեւն ու Հայաստանի նախագահ Սարգսյանը չօգտագործեցին այս հնարավորությունը՝ փոխզիջման հասնելու համար», նկատի ունենալով Կազանի հանդիպումը՝ ասել է ԵՄ արտգործնախարարը: Հիշեցնելով, որ Հայաստանի եւ Ադրբեջանի արգործնախարարներին ինքը վերջերս է հանդիպել Բրատիսլավայում, էշթոնն ընդգծել է, որ իլյուզիաներ չունի ընթացող բանակցությունների բարդության առումով, հատկապես որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պարբերաբար տեղեկացնում են Եվրոմիությանը գործընթացի եւ «նրանց հանդիպած դժվարությունների» մասին:

Այդուհանդերձ, ըստ Էշթոնի, «Հիմնարար սկզբունքների հիման վրա համաձայնագրին հասնելու ջանքերը պետք է շարունակվեն, եւ ես ողջունում եմ այն փաստը, որ երկու կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ շարունակելու դիվանագիտական գործընթացը եւ գտնելու խաղաղ կարգավորում»: Առավել կարեւոր է հաջորդ ընդգծումը: «Բայց մենք պետք է ավելին տեսնենք եկող ամիսներին: Կողմերը կարիք ունեն կրկնապատկելու իրենց ջանքերը մինչեւ տարեվերջ համաձայնության հասնելու համար: Սա կլինի մինչեւ տեղական առաջնահերթությունները՝ 2012-ին ընտրություններ Հայաստանում եւ 2013-ին ընտրություններ Ադրբեջանում», առավել քան հստակ է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներից ԵՄ ակնկալիքները ձեւակերպել Էշթոնը՝ նաեւ նշելով կոնկրետ ժամկետ:

Տես էջ 2

Հայ բժիշկների միջազգային 3-րդ համագումարը

Երեկ Պետական բժշկական համալսարանում մեկնարկեց հայ բժիշկների միջազգային 3-րդ համագումարը, որը տեւելու է մինչեւ հուլիսի 9: Համագումարին մասնակցում են նաեւ տարբեր երկրներում բնակվող հայ բժիշկներ: Այն ընթանալու է առողջապահության, սփյուռքի, կրթության ու գիտության նախարարությունների աջակցությամբ:

Երեկ բացման արարողությանը ներկա է եղել նաեւ ՀՀ վարչապետը: Նա հանդես է եկել ողջույնի խոսքով:

Համագումարի գլխավոր հովանավորը «Վիվասել-ՄՏՍ» ընկերությունն է, որը համագումարն իրականացնելու համար տրամադրել է 10 միլիոն դրամ:

Ի. Պ.

Վասիլի Աթաջանյանը՝ ԼՂՀ ԱԳ նախարարի պաշտոնակատար

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հուլիսի 7-ի հրամանագրով ԼՂՀ ԱԳ նախարարի պաշտոնից ազատվել է Գեորգի Պետրոսյանը՝ իր դիմումի համաձայն: Հիշեցնենք, որ վերջերս՝ ՀՅԴ համագումարի ժամանակ, Պետրոսյանը ընտրվեց ՀՅԴ բյուրոյի անդամ, եւ Ստեփանակերտում պաշտոնից ազատվելու դիմումն ներկայացնելը թերեւս այս վերջին հանգամանքով է պայմանավորված:

Նախագահ Սահակյանի մեկ այլ հրամանագրով ԼՂՀ ԱԳ նախարարի տեղակալ Վասիլի Աթաջանյանը նշանակվել է արտգործնախարարի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ Գեորգի Պետրոսյանը նշանակվել է խորհրդատու:

Հ. Ա.

Միջմասոնական կռիվնե՞ր

Մեր մասոնը ձեր մասոնին վնաս չէ...

Երեկ Tenderness.lodge@mail.com հասցեից «Ազգը» հաղորդագրություն էր ստացել, թե ինչ-որ «Քնքշանք» հայկական մասոնական բաց օթյակ պաշտոնապես հերքում է վերջին օրերին Երեւանում անցկացված այսպես կոչված «մասոնական» հավաքին մասնակցությունը. «Նշված հավաքը կազմակերպվել է անկախ եւ չի արտացոլում «Քնքշանք» օթյակի արժեքներն ու սկզբունքները: Խնդրում ենք ԶԼՄ-ներին՝ առավել զգույշ մեկնաբանել նման միջոցառումները եւ օգտագործել միայն ստուգված տեղեկություններ»: Է՛, «Քնքշանքը» ո՞րն է, ո՞վ է այդ «Քնքշանքը», ո՞ւմ «Քնքշանքն է», ինչո՞ւ պարզաբանում չի տալիս իր բաց կառույցի մասին, չի տեղեկացնում՝ ովքե՞ր են բաց կառույցի անդամները, որո՞նք են իր արժեքներն ու սկզբունքները, ինչո՞վ են տարբերվում Grand Orient De France ֆրանկմասոնական օթյակի սկզբունքներից եւ արժեքներից, որ իմանանք՝ ո՞վ ո՞ւմ հետ կապ ունի: Լրագրողն ի՞նչ իմանա՝ ո՞վ է բաց, ո՞վ է փակ, ով՝ ո՞ւմից անկախ, ո՞վ է իսկական, ո՞վ անիսկական, կամ հայ մասոնս ո՞րն է: Եթե հայ պաշտոնյաներ ու հայտնի դեմքեր կան մասոնական օթյակներում՝ ի՞նչն է դրա շարժիչ ուժը, եթե ուղղակի էլիտա ներկայացնելու մղումը՝ մասոնությունը Եվրոպայում արդեն հնանում է եւ նորաձեւ չի համարվում, եթե պաշտպանված լինելու մղումն է՝ կլանի անդամ լինելով կլանի բարիքներից օգտվելու, միմյանց աջակցելու մասոնական սովորույթը, է, դրա պակասն առանց մասոնության էլ Հայաստանում չկա: Ո՛չ «Քնքշանքն» է իր անդամների ցանկը հրապարակել, ո՛չ էլ մեկ օր առաջ ասուլիսով հանդես եկած Grand Orient De France-ի ներկայացուցիչ Գի Ասիզեն է անուններ տվել, թե ովքեր են օթյակի անդամ հայերը: Վերջինս միայն ասել է, թե Հայաստանում 15-20 անդամ ունեն (տեսնես ովքե՞ր են, եւ արդյո՞ք այն մարդիկ, ում անունները ժամանակին հրապարակվել էին մամուլում), չնայած նաեւ ասում էր, թե Ֆրանսիայի ֆրանկմասոնները չեն թաքցնում իրենց ինքնությունը, իսկ հայ մասոնները թաքնվում են, քանի որ, իբր, դեռ չեն ձեւավորել իրենց օթյակը: Ասիզեն էլ եկել է, որ օգնի՝ հայ եղբայրները օթյակ ձեւավորեն: Բայց Հայաստանում օթյակ ձեւավորելը մի 30-50 տարի կխաբի: Գուցե բարին էլ էդ է:

Մ. Խ.

Գերեզմանի տեղ վաճառելը՝ լուրջ եւ շահավետ բիզնես

Տեղի համար պահանջվող գումարը ո՛չ պետբյուջե է մտնում, ո՛չ էլ թաղման բյուրո

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Մայրաքաղաքում թաղման հողակտոր տրամադրվում է անվճար՝ մինչեւ 12 քմ, մնացյալ ծառայությունները՝ փոս փորելը, հանգուցյալի տեղափոխումը, երաժշտության եւ դագաղի տրամադրումը կամավոր սկզբունքով է»: Նման, հայկական իրականությունից չափազանց հեռու հայտարարությունը թաղման բյուրոյի փոխտնօրեն **Ռազմիկ Հարությունյանինն** է:

Նրա խոսքով, թաղման բյուրոն այսօր միայն զբաղված է գերեզմանատների շահագործմամբ: Գերեզմանի տեղ հատկացնում է տվյալ գերեզմանի վարիչը: Թեպետ Հարությունյանը հավաստիացնում է, որ հողատարածքն անվճար է, սակայն բոլորն էլ, ընդհուպ Հարությունյանը, լսել են, տեղյակ են, որ կլորիկ գումարներ են գանձվում հողահատկացման համար:

Անվճար հողահատկացում իրականում գոյություն չունի: Գերեզմանի տեղ վաճառելը դարձել է «լուրջ եւ շահավետ բիզնես», եւ ամեն մեկը չէ, որ կարող է դրանով զբաղվել: Պետությունից քեզ անվճար հատկացվող «մի կտոր հողը» քեզ վաճառում են նույն պետության ղեկավարներից «դոբրո» ստացածները: Սա համարվում է ամենակոռումպացված ոլորտներից մեկը: Անցյալ տարի գերեզմանների խնդրին անդրադարձավ նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ փաստելով, որ ոլորտում առկա են կոռուպցիա եւ դրամաշորթություն, եւ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել խնդիրները լուծելու համար:

Օրինակ՝ Թոխմախի գերեզմանոցը էլիտարներից է. այստեղ տարածքի համար գները սկսվում են 1000 դոլարից:

Հենց դա է պատճառը, որ վերջին տարիներին մայրաքաղաքում ապրող, սակայն «պրեստիժ» գերեզմանոցի համար բավականաչափ գումար չունեցողները համեմատաբար էժան գումարով գյուղերում են տարածք գնում:

Տես էջ 3

ԱԶԳ

Ընթացիկ

Սպահանի հայոց թեմի առաջնորդարանը հաստատում է թալանված արբաղասկերների լուրը

«Ազգը» երեկվա համարում իր թղթակցի գրչով տվել էր լուրը՝ Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի թանգարանից անհետացել են 5 մանրանկարներ եւ մի քանի յուղանկարներ, որոնց գնի շուրջը հունիսի 12-ին երկու հայեր հարցուփորձ են արել Լոնդոնում տեր Ներսես քհն. Ներսիսյանին՝ պատարագից հետո մոտենալով նրան: Լուրը լայն արձագանք գտավ հայաստանյան եւ սփյուռքյան լրատվամիջոցներում, այդ թվում՝ Թեհրանի «Արաքս» շաբաթաթերթում, որն իր հերթին մի քանի ժամ հետո մանրամասներ ու երանգներ է ավելացրել՝ հետեւյալ կերպ.

«Հունիսի 12-ին, Լոնդոնում, երկու անհայտ հայ անձինք փորձել են վաճառքի հանել հայկական թանգարանային հինգ արբաղասկերներ՝

ա- «Սուրբ թաղումն Տիառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», Սարգիս Պիծակ, 1329 թ. մագաղաթի վրա, չափսը՝ 16X23 սմ.

բ- «Վերնատուն», (Ոսնալվա), Կիրակոս Սյունեցի, 1300 թ. մագաղաթի վրա, չափսը՝ 16X23 սմ.

գ- «Հոգեգալուստ», Կիրակոս Սյունեցի, 1330 թ. մագաղաթի վրա, չափսը՝ 16X23 սմ.

դ- «Ավետարանիչ», Սարգիս Աբեղա, 1600 թ. թղթի վրա, չափսը՝ 18X25 սմ.

ե- «Ավետարանիչ», Հակոբ Ջուղայեցի, 1607 թ. թղթի վրա, չափսը՝ 18X25 սմ.

ու նաեւ, կտավի վրա, երկու յուղանկար:

Հարցի մանրամասները պարզելու համար, թերթիս խմբագրությունը կապ հաստատեց Սպահանի հայոց թեմի առաջնորդարանի հետ: Մեր հարցումին ի պատասխան առաջնորդարանի գրասենյակի պատասխանատու **Բարթուղ Բաղումյանը** հաստատելով արբաղասկերների թալանի լուրն ասաց. «Այո, լուրը ճիշտ է, հաստատում ենք»:

Բաղումյանն, իհարկե, չկարողացավ հստակեցնել յուղանկարների պարագան. «Դրանց մասին դեռ հստակ բան չենք կարող ասել», եւ ավելացրեց, որ հարցին հետեւում են եւ, ի զարմանս մեզ, շեշտեց, որ «անպայման արբաղասկերները վերադարձվելու են»:

Նկատի ունենալով, որ սա քանիերորդ անգամն է ինչ թալանի է ենթարկվում Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանը, հարց է առաջանում.

- Ինչո՞ւ, դեռից երեք շաբաթ հետո, լուրի մասին դեռ լուռ են մնում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ու Սպահանի հայոց թեմի առաջնորդարանը, հակառակ նրան որ հունիսի 13-ին արդեն իսկ իրենց տեղեկացվել էր այդ մասին: Չէ՞ որ լռությունն այս պարագայում կասկածների տեղիք է տալիս:

- Արդյո՞ք ոսիկանությունն հարցից տեղյակ է: Իսկ եթե ոչ, ինչո՞ւ:

- Ցարդ քանի՞ թանգարանային նմուշ է թալանվել Վանքից, եթե իհարկե դա հայտնի է Սպահանի հայոց թեմի պատասխանատուներին:

Ոգը գլխների՞ն է խփել, թե՞...

Ադրբեջանում վերջին օրերին ոգն այնքան անտանելի է դարձել, որ պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը հատուկ հրաման է ստորագրել, որով սահմանել է զինվորների օրվա արակարգ ժամանակացույց՝ ժամը 12-17-ը նրանք «չպետք է լքեն զորանոցները»: Այդ մասին տեղեկացրել է ՊՆ մամլո ծառայությունը եւ պարզաբանել, որ հրամանն արձակվել է «դժբախտ պատահարներից խուսափելու նպատակով»: Ըստ այդմ, զորամասերում նաեւ մեթոդական ցուցումներ են տրվել, թե «ինչպիսի առաջին օգնություն պետք է ցուցաբերել արեւահարության դեպքերում»:

Տեղեկատվության աղբյուրը, սակայն, չի մանրամասնել՝ Սաֆար Աբիեւի հրամանը վերաբերում է բոլո՞ր զորամասերին, թե՞ միայն նրանց, որ մարտական հերթապահություն չեն իրականացնում: Իսկ դա շատ կարեւոր է: Քանի որ եթե հրամանը վերաբերում է բոլորին, ապա ստացվում է, որ ցերեկվա ժամը 12-17-ն ադրբեջանցի զինվորները պետք է լինեն զորանոցներում, որպեսզի չարեւահարվեն եւ դժբախտ պատահարներ չլինեն: Բայց այդ դեպքում հարց է առաջանում՝ իսկ ովքե՞ր են մարտական հերթապահություն տանելու շփման գծում կամ հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով, որը, ըստ ադրբեջանական կողմի, «նույնպես ռազմաձակատային գիծ է»: Իսկ եթե հրամանն արձակվել է որպեսզի շփման գծից հեռու տեղակայված զորամասերում դժբախտ պատահարներ չլինեն, ապա ստացվում է, որ Սաֆար Աբիեւն ադրբեջանցի զինվորների միջեւ խտրականություն է դնում:

Մեկ անգամ չէ, որ Բաքվի որոշ ոչ իշխանական լրատվամիջոցներ բացեիբաց գրել են, որ Ադրբեջանում կան արտոնյալ եւ ոչ արտոնյալ զինվորներ: Պետական ապարատի, գործարար եւ մասնավորական շրջանակների ներկայացուցիչներն իրենց զավակներին ծառայության են դասավորում այսպես կոչված «պահեստային զորամասերում», որոնք տեղակայված են զորքերի շփման գծից հարյուրավոր կիլոմետրեր հեռու եւ երբեք մարտական հերթապահության մեջ չեն ընդգրկվում, իսկ «առաջավոր գիծ» ուղարկվում են այն ընտանիքներից նորակոչիկները, որոնք սոցիալական վիճակի բերումով զինկոմիսարիատների հետ «լեզու չեն գտնում»:

Անպատկերացնելի է, որ ներկա իրավիճակում, երբ «պատերազմի անխուսափելիության» մասին Ադրբեջանում ով չի ծուլանում, խոսում է, պաշտպանության նախարարը հրաման արձակի եւ շփման գծում տեղակայված զորամասերում «մեռյալ ժամ» հայտարարի: Հետեւաբար՝ Ադրբեջանում վերջին օրերին ոգն այնքան անտանելի է դարձել, որ պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը հատուկ հրաման է ստորագրել, որով սահմանել է զինվորների օրվա արակարգ ժամանակացույց՝ ժամը 12-17-ը նրանք «չպետք է լքեն զորանոցները»: Այդ մասին տեղեկացրել է ՊՆ մամլո ծառայությունը եւ պարզաբանել, որ հրամանն արձակվել է «դժբախտ պատահարներից խուսափելու նպատակով»: Ըստ այդմ, զորամասերում նաեւ մեթոդական ցուցումներ են տրվել, թե «ինչպիսի առաջին օգնություն պետք է ցուցաբերել արեւահարության դեպքերում»:

Տեղեկատվության աղբյուրը, սակայն, չի մանրամասնել՝ Սաֆար Աբիեւի հրամանը վերաբերում է բոլո՞ր զորամասերին, թե՞ միայն նրանց, որ մարտական հերթապահություն չեն իրականացնում: Իսկ դա շատ կարեւոր է: Քանի որ եթե հրամանը վերաբերում է բոլորին, ապա ստացվում է, որ ցերեկվա ժամը 12-17-ն ադրբեջանցի զինվորները պետք է լինեն զորանոցներում, որպեսզի չարեւահարվեն եւ դժբախտ պատահարներ չլինեն: Բայց այդ դեպքում հարց է առաջանում՝ իսկ ովքե՞ր են մարտական հերթապահություն տանելու շփման գծում կամ հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով, որը, ըստ ադրբեջանական կողմի, «նույնպես ռազմաձակատային գիծ է»: Իսկ եթե հրամանն արձակվել է որպեսզի շփման գծից հեռու տեղակայված զորամասերում դժբախտ պատահարներ չլինեն, ապա ստացվում է, որ Սաֆար Աբիեւն ադրբեջանցի զինվորների միջեւ խտրականություն է դնում:

Մեկ անգամ չէ, որ Բաքվի որոշ ոչ իշխանական լրատվամիջոցներ բացեիբաց գրել են, որ Ադրբեջանում կան արտոնյալ եւ ոչ արտոնյալ զինվորներ: Պետական ապարատի, գործարար եւ մասնավորական շրջանակների ներկայացուցիչներն իրենց զավակներին ծառայության են դասավորում այսպես կոչված «պահեստային զորամասերում», որոնք տեղակայված են զորքերի շփման գծից հարյուրավոր կիլոմետրեր հեռու եւ երբեք մարտական հերթապահության մեջ չեն ընդգրկվում, իսկ «առաջավոր գիծ» ուղարկվում են այն ընտանիքներից նորակոչիկները, որոնք սոցիալական վիճակի բերումով զինկոմիսարիատների հետ «լեզու չեն գտնում»:

Անպատկերացնելի է, որ ներկա իրավիճակում, երբ «պատերազմի անխուսափելիության» մասին Ադրբեջանում ով չի ծուլանում, խոսում է, պաշտպանության նախարարը հրաման արձակի եւ շփման գծում տեղակայված զորամասերում «մեռյալ ժամ» հայտարարի: Հետեւաբար՝ Ա-

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԵՄ-ի վերջնաժամկետը...

1-ին էջից

Սպասելիքների ժամկետային կտրվածքի առումով Էջբոնը նաեւ հույս է հայտնել, թե որեւէ առաջընթաց կլինի արդեն մինչեւ աշնանը Վարշավայում տեղի ունենալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովը:

Նշելով, որ ղարաբաղյան խնդրի կարգավորումը ԵՄ ռազմավարական շահերից է բխում, լեդի Էջբոնը եզրակացրել է, որ հակամարտության կարգավորումը կտրանսֆորմացնի հարավկովկասյան տարածաշրջանը: Այդ պարագայում «սահմանները կարող են բացվել ոչ միայն Հայաստանի եւ Ադրբեջանի, այլեւ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ», լիովին թուրքական տեսակետ ներկայացնելով՝ ասել է ԵՄ արտաքին հարցերի ներկայացուցիչը: Տրանսպորտային ուղիների կարգավորման հետ մեկտեղ էլ, ըստ ԵՄ ներկայացուցչի, «Հարավային Կովկասը վերջապես կարող է դառնալ այն, ինչ պետք է լինի՝ դարպաս Եվրոպայի եւ Ասիայի միջեւ»:

Պատրաստակամություն հայտնելով աջակցելու Մինսկի խմբի համանախագահների աշխատանքին՝ ԵՄ արտաքին հարցերի ներկայացուցիչը մանրամասնել է, որ ԵՄ լրացուցիչ աջակցության բնույթը կարող է քննարկվել կողմերի եւ համանախագահների հետ, այս մոտեցմամբ էլ հստակեցնելով ԵՄ նկրտումները՝ մտնելու Մինսկի խմբի գործընթաց ու չբավարարվելով դրանում Ֆրանսիայի մասնակցությամբ: Ավելին, այս առնչությամբ, ըստ Էջբոնի, արդեն իսկ խորհրդակցություններ են ընթանում, եւ սա այն սոուսով, որ հակամարտության կարգավորման ամեն մի ելք մեծ նշանակություն ունի Եվրոմիության համար:

Անգամ, ըստ Էջբոնի, ԵՄ-ն պետք է պատրաստ լինի պարտավորություն ստանձնելու կարգավորման իրականացման ժամանակ, երբ այդ փուլը գա: «Անելիք շատ կլինի՝ վերականգնումից, ականազերծումից ու փախստականներից մինչեւ տնտեսական վերականգնում եւ անվտանգության աջակցության խթանում»: Իսկ որ տարածաշրջանում «այլ գործընկերներ էլ կան, ասենք, Թուրքիան», ԵՄ-ն պետք է սերտորեն համագործակցի նաեւ Թուրքիայի հետ: Այս ամենն էլ իրագործելու համար Էջբոնը Հարավային Կովկասում հստակ ներկայացուցչի նոր թեկնածու է առաջարկել:

Խաղաղ կարգավորման համաստեքստում ԵՄ ներկայացուցիչն ընդգծել է, որ այնուամենայնիվ ընտրություն պետք է կատարեն Հայաստանի եւ Ադրբեջանի լիդերները, հաշվի առնելով իրենց բնակչության շահերը, իսկ ԵՄ-ն՝ «Մենք գիտենք, թե ինչ ընտրություն կուզեինք, որ նրանք անեն. փոխզիջում ու խաղաղություն»:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Մեռյալ սեզոն

1-ին էջից

Այդպես էր անում իշխանությունը, այդպես էր անում ընդդիմությունը (համարյա նույն մոտեցումները հնչեցնելով), այդպես հարմար էր՝ երկիրը կարգի բերելու վերաբերյալ կարեւոր եւ դժվար որոշումները հետաձգելու համար «լուրջ պատճառ» կար: Վաս զարգացումներ այդպիսով հիմա մի կողմից կարող են լինել ղարաբաղյան հարցում, մյուս կողմից՝ մեր ապրելակերպը դույզն-ինչ լավացնելու մոտիկ հնար չի երեւում, եւ միաժամանակ՝ հիմնական քաղաքական ուժերն ուզում են վերարտադրվել: Նորմալ երկրում վերջինն անհնար կլիներ: Նորմալ երկրում երկրի կյանքում իրապես բան չփոխած քաղաքական ուժերը պիտի որ հավակնություն չունենային նույն տեսքով եւ նույն բովանդակությամբ ներկայանալու եւ նույն ծավալով իշխանական լծակներին տիրանալու: Մեզ մոտ ամեն ինչ ոնհիգլուխ շուռ է եկած՝ խոսքով ամեն ինչ օ թեյ է, նախընտրական բոլոր խոսքերը կատարված, դեռ մի բան էլ ավելի: Հիշեցի՞ք կոմունիստների սուտ տոկոսներն ու գերակատարումները: Հիմա նայում ու տեսնում ենք՝ այդպես չէր իսկապես, ու մենք շատ լավ էլ կարող էինք ոչ թե ժամանակ ծախսել հայ-թուրքական պարտիայի, ղարաբաղյան ոչ հայանպաստ լուծման անընդհատ սպասման վրա, այլ մեր ներսի խնդիրները լուծելու. ո՞վ է պատասխան տալու կորսված տարիների համար, ո՞վ է անգին, թանկ, ազգին միգրացիայից հետ պահող գործերը չանելու համար պատասխանատվություն կրելու, ո՞վ է իրեն պատասխանատու զգալու այն բանի համար, որ չնորացվեց մեր քաղաքական համակարգը եւ չպատրաստվեց քաղաքական հերթափոխը, քանի որ դա ձեռք չէր տալիս նույն համակարգը ներկայացնող եւ արտաքսական ընդդիմությանը, եւ իշխանությանը: Այս երկուսի զգայաններն էլ ընդարմացել են՝ տեւաբար իրար դեմ պայքարելուց, եւ եթե այս անգամ գայլն իսկապես մոտենա հոտին (նկատի ունենք, որ միջազգային հանրությունն ուզում է ոչ այնքան հայանպաստ լուծում պարտադրել ղարաբաղյան խնդրում), խնդիր կա վստահ լինելու, որ որոշում կայացնողները վերը նշված պատճառներով զգոնությունը կորցրած չլինեն:

Փաստորեն Կազանով քաղաքական սեզոնը փակեցինք, ոչ մի վաս բան տեղի չունեցավ առայժմ, բայց մեր կյանքը մնում է մինուս նշանի տակ, մեր հարցերը չլուծված, իշխանություն-ընդդիմություն տանտունիկը՝ կիսաս, եւ ամեն ինչից երեւում է, որ աշնանը քաղաքական սեզոնը բացելու ենք ոչ թե երկխոսություն-բանակցություն, արտահերթ-հերթական շուտասելուկներով, այլ էլի ղարաբաղյան զարգացումներով, ամեն ինչ ցուցանում է դա, ու այս անգամ ոչ թե երեւութական, այլ իրական է վտանգը: Որ Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Քաթրին Էշթոնը ասում է՝ «Համաձայնության հասնեք մինչեւ տարեվերջ», «Առաջիկա ամիսներին պետք է ավելին տեսնենք»՝ խաղաղ պարտավորությունը վերահաստատելուց զատ, «Զանքը պետք է կրկնապատկել», սրանք, երեւում է, դատարկ խոսքեր չեն միայն , քանզի՝ «ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորումն էլ առանցքային ռազմավարական հետաքրքրության առարկա է ԵՄ-ի համար», նայած ի՞նչ շահեր նկատի ունի տիկին Էշթոնը:

Իհարկե, մինչեւ սեպտեմբերին Վարշավայում կայանալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողով ինչ-որ բան սպասելն իսկապես ռեալ չէ, սակայն որ ասվում է՝ փոխզիջման եւ խաղաղության ընտրություն պետք է անեն Սարգսյանն ու Ալիեւը, իսկ մարդ կա, որ հակամարտության կարգավորումը համարում է Նոբելյան մրցանակ ստանալու հնարավորություն, սա արդեն չափազանցություն է: Բայց մեջը ռեսուրս կա, վկա՝ Լավրովի ակտիվությունը, Մեդվեդեւի՝ նոր առաջարկներով փաստաթղթի մասին խոսակցությունը եւ բազմաթիվ այլ վկայություններ: Որ բարդ է Կազանից հետո, երեւում է ամեն ինչից, անգամ Իլհամն է չափը կորցրել ու էս անգամ մենակ ռազմական գործոնից չի խոսում, այլ համ էլ ձեռքի հետ հոխորտում է, թե հայկական պետությունը ադրբեջանական պատմական տարածքի վրա է ստեղծվել: Էխ, Իլհամ, քոչվոր նախահայրերդ եսիմ որտեղ էին վրան խփում, երբ հայերն այդ տարածքների տերն էին: Ու մեր Շավարշն էլ ստիպված հիշեցնում է, որ 100 տարի առաջ Ադրբեջան պետություն չկար քարտեզի վրա: Այս անգամ դժվար է լինելու նախ մեզ համար, ժամանակ էլ չունենք, որ եւ ներքաղաքական դաշտում խաբս տանք՝ անկապ արտաքին քաղաքական իբր հաջողություններով պարծենալով, այնպես որ ամռան այս ամիսուկեսը ընդդիմությունն ու իշխանությունը պետք է ավարտեն իրենց մուկնուկաստուն, ու անգամ էական չէ՝ ի՞նչ արդյունքով, ոչ որ այլեւս լուրջ արդյունքի չի սպասում, հասարակության լայն շերտերին ուղղակի այլեւս այս դիմակայությունը պետք չէ, պետք է արդյունավետ պետական ապարատ, խնդիրների հերթականությամբ լուծում, որն անձ փոխելով չի արվում, այլ աշխատելու ու բան փոխելու կամքով: Մինչդեռ մերոնք բոլոր ոլորտներում ժամանակի հետեւից մի կերպ են հասնում, մերոնք չեն կարողանում գործընթաց կառավարել՝ դրանց հետեւից քարշ են գալիս-ուշանում են: Ամեն ինչ ընթանում է ծանրաշարժ, անհետաքրքրական եւ առանց էնտուզիազմի: Սպանցիին՝ մեկը բանակցություն, մեկը՝ երկխոսություն ասելով: Հիմա էլ էդ բառախաղն է անվերջ-հոգեմաշ ձգվելու: Դե մի բան արեք, պրծնենք, էլի: Կուզեք՝ բանակցեք, կուզեք՝ երկխոսեք, հասարակությանն ի՞նչ դրանից: Սիրահարվեք, ամուսնացեք, բաժանվեք, լիճ ունենք, կուզեք լողացեք, կուզեք՝ խեղդվեք: Դե մի բան արեք, որ աշնանը ազգովին գոնե ղարաբաղյան աննպաստ զարգացման պատրաստ լինենք ու քաղաքական մանեւրներ-ությունների գերին չդառնանք: Իսկ թե նոր քաղաքական մշակույթ է ձեւավորվում Հայաստանում, էլ չգիտեմ ինչ, մի տեսակ չի երեւում խոսքի հետեւում նյութ. մենք չե՞նք ուզում էդ նոր մշակո՞ւյթը, բայց էդ մշակույթը հո մենակ «արտահերթ-հերթական» կամ «բանակցություն-երկխոսություն» եզրույթների արտաբերումով չի՞ սահմանափակվում: Հա, միգուցե երկրի ու պետականության համար երկխոսությունը լավ բան է, բայց այդ բառերը արտասանելով միայն ոչ հերթական, եւ ոչ էլ արտահերթ ընտրություններն ավելի թափանցիկ կամ հասարակության վստահությունը վայելող կդառնան, մանավանդ որ ընտրությունների կեղծման առումով ոչ մի իշխանության անուն մաքուր չի եղել, հավասարապես երեք նախագահների ղեկավարած իշխանություններն էլ դրա համար քննադատվել են:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Տիգրան Սարգսյանն արձանագրեց դրական արդյունքներ

Պետական ծառայություններում իրականացրած փոփոխություններից հետո

Կառավարության երեկվա նիստը վարչապետ Տիգրան Սարգսյանը սկսեց պետական ծառայությունների մոնիտորինգի արդյունքները ներկայացնելով: Առաջինը նա անդրադարձավ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում իրավունքների գրանցման ընթացակարգում կատարված փոփոխությանը, որի արդյունքում երկրորդային գրանցումների ժամանակ չեն պահանջվում գույքի տեղազննություն եւ չափագրում: Ծառայության պարզեցման շնորհիվ 1 ամսվա ընթացքում շուրջ 10 հազար քաղաքացի ազատվել է այդ ծախսատար ծառայությունից: Տարեկան այդ ցուցանիշը կկազմի 120 հազար մարդ:

Երկրորդ ոլորտն արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալությունն է: Էլեկտրոնային միասնական եւ մեկ պատուհանի համակարգի սկզբունքի ներդրումից հետո էլեկտրոնային եղանակով այս ծառայությունից արդեն օգտվել են շուրջ 50 հոգի: Սակայն, ըստ վարչապետի, նրանց տեսակարար կշիռը դեռեւս փոքր է եւ չի գերազանցում ընդհանուր ձեռնարկությունների գրանցման 10 տոկոսը: «Չնայած կոռուպցիոն ռիսկերը կտրուկ նվազել են, դեռեւս առկա են դժգոհություններ, որոնք վերաբերում են սպասարկմանը եւ հերթերին», ասաց Տիգրան Սարգսյանը եւ հանձնարարեց արդարադատության նախարարությանը՝ քննարկել, թե ինչ լրացուցիչ տարածքներ կարող են հասկացվել:

Հաջորդ՝ ավտոմեքենաների տեխզննման իրականացման փոփոխությունից հետո շուրջ 70 հազար տեխնիկական զննման կտրոններ տրամադրվել են առեւտրային բանկերին: «Համոզված եմ, որ 3 ամսվա ընթացքում մենք կունենանք էական դրական արձագանք մեր քաղաքացիներից», նշեց վարչապետը:

Չորրորդը վարորդական վկայականներ ստանալու եւ ավտոմեքենա գրանցելու ընթացակարգերի պարզեցման հարցն էր, որի մոնիտորինգը ցույց է տվել, որ կոռուպցիոն երեւույթներն էապես նվազել են, սակայն փոխարենն առաջացել է քաղաքացիների դժգոհությունը սպասարկման որակից: «Կոռուպցիոն ռիսկերը այս պահի դրությամբ առնչվում են այսպես կոչված «դալալներին», որոնք հանդիսանում են միջնորդ, եւ այս երեւույթը նույնպես պետք է վերացվի», շեշտեց Տիգրան Սարգսյանը, ավելացնելով, որ մոտակա 2 ամիսների ընթացքում մեքենաների գրանցումն ու գրանցումից հանելը չպետք է գերազանցի 1 ժամը, իսկ 2 ամիս հետո այդ ժամանակահատվածը պետք է կրճատվի:

Հինգերորդ հարցը վերաբերում էր վարորդական վկայականների տրամադրման նոր գործընթացի ժամանակ, առողջապահության նախարարության կողմից վկայական ստանալու համար սահմանափակում հանդիսացող հիվանդությունների ցանկի տրամադրմանը ճանապարհային ոստիկանությանը, որպեսզի քաղաքացիները զերծ մնան տարբեր տիպի տեղեկանքներ հավաքագրելուց եւ այդ տեղեկանքները ոստիկանությանը ներկայացնելուց: Հանձնարարվեց ձեւավորել միասնական տեղեկատվական բազա, որն այս պահին բացակայում է:

Վեցերորդը պոլիկլինիկաներից քաղաքացիներին տրվող շուրջ 20 տեսակի տեղեկանքների վերացմանն էր վերաբերում, բայց մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել, որ ներգիայով շարունակվում է տեղեկանքների հավաքումը: «Անհրաժեշտ է, մի կողմից, իրազեկել մեր քաղաքացիներին, մյուս կողմից՝ համապատասխան հաստատություններին, որ այլեւս նման տեղեկանքներ պահանջել չի կարելի», շեշտեց վարչապետը:

Տիգրան Սարգսյանը հայտնեց նաեւ, որ մոնիտորինգի են ենթարկվել կրթության եւ գիտության, ֆինանսների, էկոնոմիկայի, տրանսպորտի եւ կապի, արտակարգ իրավիճակների, գյուղատնտեսության նախարարությունների լիցենզավորման գործակալությունները, եւ պարզվել է, որ կոռուպցիոն դրսեւորումները բացակայում են: Խնդիրներ են արձանագրվել էկոնոմիկայի նախարարության շուկայի եւ սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունում եւ արտակարգ իրավիճակների նախարարության պետական հրդեհային տեսչությունում: «Անհրաժեշտ է, որ այս ոլորտներում նույնպես բացառենք կոռուպցիոն երեւույթները», նշեց Տիգրան Սարգսյանը:

Ամփոփելով իր ելույթը՝ վարչապետը եզրակացրեց, որ կառավարության ձեռնարկած միջոցառումները դրական արդյունքներ են տալիս: «Համոզված եմ, որ 2-3 ամսվա ընթացքում այդ արդյունքները շոշափելի կլինեն, որովհետեւ ամեն ամիս տասնյակհազարավոր քաղաքացիներ օգտվում են այս ծառայություններից եւ որակական փոփոխություններ տեսնում նախորդ տարիների համեմատ», ասաց նա:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հրկիզել են Սախարովի անվան ՄԻՊ կենտրոնի Շիրակի գրասենյակը

Հուլիսի 6-ի առավոտյան ժամը 5-ին մոտ անհայտ անձինք մեսաղյա ճաղերի արանքից կոտրել են Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայաստանյան կենտրոնի Շիրակի մասնաճյուղի գրասենյակի (Գյումրի) պատուհանի ապակին եւ հեղուկ վառելանյութով հրկիզել պատուհանն ու պատուհանագոգը: Գրասենյակի հարեւանությամբ ապրող մարդիկ, տեսնելով կրակը, զանգահարել են հրշեջ ծառայություն եւ ինքնուրույն միջոցներ ձեռք առել հրդեհաշիջման համար, ինչից հետո հրդեհը հանգցրել են: Ուսումնասիրությունից պարզվել է, որ էականորեն վնասվել է գրասենյակի դասընթացների սրահի գույքի մի մասը եւ սրահն ամբողջությամբ, ինչի նորոգման անհրաժեշտ ծախսը գերազանցում է 600.000 դրամը:

Հայտնելով այս մասին, երեւույթը դատապարտող համատեղ հայտարարությամբ են հանդես եկել Գյումրու, Շիրակի մարզի, Երեւանի, Վանաձորի, Գորիսի ընդհանուր առմամբ շուրջ վեց եւ կես տասնյակ հասարակական կազմակերպություններ: «Մենք՝ հայաստանյան քաղաքացիական հասարակության ներքոստորագրյալ կազմակերպությունների ներկայացուցիչներս», ասված է հայտարարության մեջ, «մտահոգություն ենք հայտնում այս հարձակման եւ հրկիզման կազմակերպությամբ, դատապարտում ենք այս հարձակումը ծրագրողների եւ իրականացնողների հանդգնությունը, նշելով, որ սա առաջին դեպքը չէ, երբ փորձում են այս մեթոդներով ահաբեկել կամ պատժել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությանը եւ իրավապաշտպաններին:

Ոստիկանությունը պարտավոր է հնարավոր բոլոր ջանքերը ներդնել՝ շուտափույթ բացահայտելու հանցագործության անմիջական կատարողներին եւ պատվիրողներին, ապահովել բավարար հրապարակայնություն գործի ընթացքի մասին»:

Հայտարարության հեղինակներն իշխանություններին կոչ են արել հրապարակավ դատապարտել բռնության նման դրսեւորումները եւ աջակցել կազմակերպության ու Գյումրու գրասենյակի բնականոն գործունեության շարունակմանը:

Գ. Մ.

Գերեզմանի տեղ վաճառելը՝ լուրջ եւ շահավետ բիզնես

1-ին էջից

«Դե ֆակտո» ակումբում ներկա մի քանի տասնյակ լրագրողները բազմաթիվ պատմություններ էին ներկայացնում, թե ինչպես են իրենց ծանոթից, հարազատից, բարեկամից գումար պահանջել՝ գերեզմանի տեղ հատկացնելու: Բերված բոլոր փաստարկներին, պատմություններին ու հարցադրումներին Հարությունյանը միայն պատասխանում էր. «Եկեք բոլորս միասին պայքարենք»:

Թեպետ բոլոր գերեզմանատների վերադասը թաղման բյուրոն է, ու գերեզմանատների տնօրենները թաղման բյուրոյից աշխատավարձ են ստանում, սակայն, Հարությունյանի խոսքերով, իրենք վերահսկողական լծակներ չունեն: Տեղյակ չեն, որ գերեզմանատների տնօրենները տարածքի տրամադրման համար գումարներ վերցնում են. ավելին՝ այդ գումարից իրենց բաժին չի հասնում:

Թաղման բյուրոյի վաստ աշխատանքի եւ անհետեւողականության պատճառն այն է, որ մայրաքաղաքում գործում է 21 գերեզմանատուն, բայց կան մեկ ինժեներ եւ մեկ տնօրեն: «Կարող է՝ մեկ օրում 30 հուղարկավորություն է, ինչպե՞ս վերահսկողություն սահմանել: Դրա համար կան հատուկ ծառայություններ՝ ոստիկանություն, դատախազություն, մարդիկ, որոնք պետք է հսկեն՝ գումար վերցրե՞ց, թե՞ ոչ»:

Հարությունյանն առաջարկում է, որ հանգուցյալի հարազատները ոստիկանությանն ահազանգեն, որ հողահատկացման համար իրենցից անօրինական գումար են պահանջում: «Հանգուցյալի տերը ինչո՞ւ է գումար տալիս, քարը թող վերցնի, տա գլխին: Դրանք ոչ պետքյուջե են մտնում, ոչ էլ իմ գրպանը: Ես չգիտեմ, թե այդ գումարները ուր են գնում եւ ում են տալիս», ասում է նա:

Թաղման բյուրոյի փոխտնօրենը նշում է, որ որոշ ժամանակ անց մայրաքաղաքում այլեւս հողատարածք չի մնա գերեզմանոցի կառուցման համար:

Հարությունյանը որպես խնդրի լուծման միակ տարբերակ ներկայացնում է դիակիզարանների կառուցումը: «Անձամբ կողմ եմ, որ ինձ դիակիզեն», ասում է Հարությունյանը՝ հավելելով, որ եթե ներկայիս 12 քմ տարածքում տեղավորվում է 5 դագաղ, ապա դիակիզարան կառուցելու դեպքում նույն տարածքի վրա կտեղադրվի 18 սափոր:

Թեպետ դիակիզարան կառուցելու խոսակցությունները շարունակվում են արդեն 2 տարի, սակայն գործնական քայլեր չեն ձեռնարկվել: Գլխավոր պատճառ ներկայացվում է ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Սակայն կարեւորագույն հարց է նաեւ այն, որ Մայր աթոռը կտրականապես դեմ է դիակիզման գաղափարին:

«Հայ առաքելական եկեղեցին չի ընդունում այդ գաղափարը: Քրիստոսը մարմնով բարձրացավ երկինք, հետեւաբար նրա հետեւորդներն էլ պետք է մարմնով բարձրանան երկինք», ասում է Կոմիտաս վարդապետ Հովնանյանը:

Ռազմիկ Հարությունյանը հակադարձում է. դիակիզման դեպքում 70-80 տոկոս հողատարածք կձեւավորվի:

Սրբազանն էլ թաղման բյուրոյի փոխտնօրենի ուշադրությունն է հրավիրում այն փաստին, որ գերեզմանների վրա հայերը եկեղեցի են կառուցում, դամբարաններում՝ շատրվաններ, մարմարակերտ շինություններ ու արձաններ:

«Թաղման արարողությունները վերածվել են աբսուրդի, չես հասկանում, ո՞ր օրենքի համաձայն է կատարվում այդ ողջ արարողությունը: Քրիստոնեական՞ն, թե՞ ոչ քրիստոնեական: Չունենք դեմք, չունենք դիմագիծ: Կենցաղը լրիվ աղավաղված է Այսօր թաղումը վերածվել է էլիտար ինչ-որ բանի, թե ով ինչ դրեց սեղանին ու որքան», ասում է հայր Կոմիտասը:

Համաձայն եկեղեցական օրակարգի՝ թաղումից հետո հանգուցյալի հարազատները պետք է գերեզման գնան յոթին, քառասունին եւ տարուն:

«Մինչդեռ այսօր հանգուցյալի բարեկամները ամեն շաբաթ գերեզման են գնում, հետո վերադառնում տուն, սեղան գցում, դա լրիվ արժեզրկված վարքագիծ է: Ժողովուրդը բարոյապես նահանջ է ապրել: Կենցաղներն, ըստ ավանդության (ինչը ոչ մի կապ չունի եկեղեցական կանոնների հետ:- Ծ.խ.) երեքն են: Առաջին բաժակով պետք է հիշեն հանգուցյալին, հետո՝ տան հին ու նոր հանգուցյալներին, իսկ երրորդ բաժակով հանգուցյալի ընտանիքի անդամները շնորհակալություն հայտնեն, որ հարգել են իրենց վիշտը եւ եկել հարգելու հանգուցյալի հիշատակը: Մինչդեռ այսօր սեղանները գցում են ու կենացները կամաց-կամաց քաղցրանում են: Քիչ է մնում Թաքա Սիմոնյանին հրավիրեն երգելու», ասում է սրբազանը:

Հ. Գ. -Այսօր հանրապետության էլիտար մասսան ոչ միայն հոգեհանգիստ է մատուցում ռեստորաններում, այլեւ լուսանկարչի եւ օպերատորի հրավիրում, ովքեր արտասահմանում ապրող բարեկամների համար լուսանկարում ու ձայնագրում են թաղման ողջ արարողությունը: Հատկապես օպերատորին զգուշացնում են, որ ուշադրություն դարձնի սեղանի պարունակությանը, գերեզմանի մեծությանը, դագաղի որակին ու հագուստին եւ խոշոր կադրերով նկարի:

ՀԲ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

200 մլն դոլար Համաշխարհային բանկից առաջիկա 2 տարում



Հայաստանի ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը** եւ Համաշխարհային բանկի Երեւանի գրասենյակի ղեկավար **Ժան-Միշել Հաոին** երեկ ներկայացրին Հայաստանում 2009 թ.-ից ՀԲ իրականացրած ծրագրերը եւ խոսեցին առաջիկա 2 տարիների դրանց հետագա ընթացքի մասին:

Ըստ Ժան-Միշել Հաոիի, ճգնաժամի ընթացքում եւ դրանից հետո Հայաստանը փորձել է կենտրոնանալ ճգնաժամից առավել տուժած խոցելի խավերի վրա, ինչպես նաեւ իրականացնել միջնաժամկետ ծրագրեր: ՀԲ ներկայացուցչի կարծիքով, կառավարությունը ՀԲ աջակցությամբ էական առաջընթաց է արձանագրել դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականության ուղղությամբ: Այնուհետեւ նա թվարկեց 2009-ից մինչ օրս իրականացրած ծրագրերը: Դրանք են՝ 290 կմ գյուղական ճանապարհների վերանորոգում, 200 համայնքներում դպրոցների, բուժհաստատությունների նորոգում, խմելու ջրի եւ գազի մատակարարման ծրագրեր, 89 կմ ոռոգման ցանց, առողջապահական եւ այլ ծրագրեր: Այդ ամենը նկատի ունենալով՝ Համաշխարհային բանկը քննարկել ու համաձայնության է եկել Հայաստանին 200 մլն դոլարից փոքր-ինչ ավելի աջակցություն տալու հարցում: Այդ գումարն ուղղվելու է տնտեսական աճի օժանդակությանը, ինչպես նաեւ շարունակվելու են սոցիալական ծրագրերը: Միաժամանակ, Ժան-Միշել Հաոին տեսակետ հայտնեց, որ կառավարությունը պետք է արագացնի բարեփոխումների ընթացքը:

Վաչե Գաբրիելյանը եւս ասաց, որ ծրագրերի կատարման լավ արդյունքներ ունենք, նշելով, որ նվազել է սոցիալական վիճակի խոցելիությունը, եւ հիմքեր են ստեղծվել ավելի հավասարակշիռ տնտեսական աճի համար: 2012-ին ՀԲ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերից Հայաստանի ֆինանսների նախարարը կարեւորեց ոռոգման եւ գյուղական ճանապարհների կառուցման ծրագրերը:

«Ֆորբսի» գնահատականը Հայաստանին «խիստ ակնթարթային է»

Ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը երեկ անդրադարձավ նաեւ Հայաստանին տրված «Ֆորբս» հանդեսի գնահատականին, համաձայն որի՝ մեր երկիրը համարվում է վատագույն տնտեսություն ունեցող երկրորդ երկիրը անցած երեք տարիներին: Ըստ նախարարի, «Ֆորբսի» գնահատականը հիմնված է մի շարք ցուցանիշների վրա՝ տնտեսական աճ, գնաճ, առեւտրային հաշվեկշիռ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2009-ին Հայաստանն ունեցավ 15 տոկոս տնտեսական անկում, բարձր գնաճ եւ բացասական առեւտրային հաշվեկշռի խորացում, ապա նման ցուցանիշը հասկանալի է: Սակայն դա չի կարող կայուն ցուցանիշ համարվել, քանի որ եթե բացառենք 2009, ապա Հայաստանը բոլորովին այլ ցուցանիշներ կունենա: «Դա խիստ ակնթարթային գնահատական է», եզրափակեց Վաչե Գաբրիելյանը:

Հայաստանի ֆինանսների նախարարի հետ համակարծիք էր նաեւ Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի ղեկավար Ժան-Միշել Հաոին: «Ակնհայտ է, որ Հայաստանի տնտեսությունն այդքան վատ չէ», շեշտեց նա, ավելացնելով, որ, ճիշտ է, եղել են տնտեսական անկում, բարձր գնաճ եւ այլն, բայց դա ակնթարթային գնահատական է: Ըստ Ժան-Միշել Հաոիի, Հայաստանն ունի մարտահրավերներ, որոնց լուծմանը ձգտում է աջակցել Համաշխարհային բանկը:

Ա. Մ.

ԱԶԳ Ազգային

Սփյուռհայությունը ֆնսադասելու իրավունք ունի՞

Այն պարագայում, երբ մեզանից նույնիսկ քչերն են երբեւէ ի վիճակի որեւէ քաղաքականություն ծրագրել կամ իրականացնել, ապա մենք բոլորս էլ իհարկե ի վիճակի ենք գնահատել այդ քաղաքականությունը:

Պերիկլես
Հին Հունաստանի պետ, քաղաքական գործիչ

Այսօր ոչ ոքի համար գաղտնիք չէ, թե Հայաստանում ինչպիսի տնտեսական եւ քաղաքական պայմաններ են տիրում, եւ ոչ էլ հոռետեսային բարաբաջանքներ են, որ եթե այդպես շարունակվի, ապա լրջորեն վտանգվելու է երկրի ապագան եւ ընդհանրապես նրա՝ որպես անկախ պետական միավորի գոյությունը: Պարզից պարզ է, որ այսօր համայն հայության ամենակարեւոր, հրատապ, ամենաառաջնային խնդիրը՝ Հայաստանում սոցիալտնտեսական վիճակի եւ քաղաքական մթնոլորտի բարելավումն է, երկրի անվտանգության ապահովումը եւ արտագաղթի առաջն առնելը: Եվ պարզ է նաեւ, որ այսօր այս հարցերը հայության համար ավելի կենսական են, քան ցեղասպանության միջազգային ճանաչումը, սակայն, ցավոք, սփյուռհայության մտավորականությունը (բացի որոշ անհատներից) եւ նրա լրատվական միջոցները ինչ-ինչ պատճառներով շրջանցում են դրանք եւ խուսափում են ֆնսադասական մոտեցում ցուցաբերել դրանց նկատմամբ: Այնինչ անընդհատ ու ամենուր ցեղասպանության ճանաչումն են վանկարկում: Արդյոք արդարացուցի՞չ է նման մոտեցումը, սփյուռհայության լռությունը որեւէ դրական ազդեցություն ունենալո՞ւ է Հայաստանի քաղաքական կյանքի վրա, պարզ է՝ ոչ:

Շատերը Հայաստանում եւ արտերկրում ցանկանում են սփյուռհայությանը վերադահել Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական իրավիճակի ֆնսադասության իրավունքը, բայց ինչո՞ւ, ո՞վ է շահելու դրանից, բայց, մյուս կողմից, հանուն հայ ժողովրդի եւ հայ ազգի անվտանգ ապագայի նա նաեւ բարոյապես է սփիռված դա անել, դա նույնիսկ նրա հայրենասիրական պարտքն է: Մենք դեռ սովետական ժամանակներից ենք վարժվել լռություն պաշտպանել եւ մշտապես սիրալիր ընդունել Հայաստանից մեզ մոտ հյուր եկած պաշտոնական անձանց, նրանց ծափահարել, մեծարել, նույնիսկ գովերգել, բայց ոչ մի խոսքով չանդրադառնալ (քանի որ պաշտաճ չի համարվել հյուրի ներկայությամբ այդ անել), չֆնսադասել Հայաստանում տիրող մի շարք բացասական եւ ազգակործան երեւույթներ, ո՞վ շահեց դրանից: Այսօր մենք պետք է անցյալի սխալները չկրկնենք: Այսօր սփյուռքի մտավորականությունը ինչ-որ չափով կարող ուժ է եւ եթե իր հնարավորությունները ճիշտ, տեղին ու ֆնսադասաբար օգտագործի եւ սատարի Հայաստանում ընդդիմադիր, իսկապես ժողովրդավար, բայց դեռեւս թույլ ուժերին, ապա շատ բան կարող է երկրում դեպի լավը փոխվել:

Արեւմուտքի երկրների ժողովրդավարության մեծագույն նվաճումը պետական կառույցների եւ պաշտոնյաների գործունեության հասարակական կառույցների մանրակրկիտ հսկողությունն է եւ ֆնսադասական մոտեցումը (օրինակ՝ Գերմանիայում der Spiegel շաբաթաթերթը իր բացահայտումներով իսկապես կասալիզատորի դեր է կատարում), առանց որի թերի կլիներ ժողովրդավարությունը եւ կարճ կյանք կունենար: Իհարկե, սփյուռհայությունը ի վիճակի չէ պառլամենտական հսկողություն սահմանել Հայաստանում տիրող իշխանությունների գործունեության վրա, բայց կարող է ֆնսադասել եւ փորձել դրսից հասարակական հսկողություն սահմանել (ինչը երկրի ներսում, ժողովրդավարական պրակտիկայի բացակայության պատճառով, երբեմն հնարավոր չէ անել):

Ժամանակին նույնիսկ ՀՀ առաջին նախագահ պարոն Լեւոն Տեր-Պետրոսյանն էր սփյուռհայային արգելում ֆնսադասել Հայաստանում տիրող կարգ ու կանոնները, խարհի եւ այլ ժողովուրդներ ոտքի են ելել, զոհ են տալիս դրան հասնելու համար: Այդ միջոցները օրինակելի չեն հայ ժողովուրդի համար, նա չի կարող իրեն թույլ տալ նման ճանապարհով գնալ, որովհետեւ դա կործանարար է լինելու առանց այն էլ «արյունաքամ» երկրի համար: Մնում է, որ բոլոր ժողովրդավար ուժերը փորձեն միասնաբար հանդես գալ: Նրանք պետք է փորձեն իրենց իսկապես ժողովրդավար ծրագրով հասնել, ոտքի հանել ժողովրդին, նեցուկ կանգնել նրան, ով ներկայիս կորցրել է ապագայի եւ լավ տեղաշարժի հավատը, հույսը եւ լքում է երկիրը: Նրանք պետք է փորձեն մոբիլիզացնել ժողովրդին Ազգային ժողովի եւ նախագահական ընտրություններում մեծամասնության ձայները շահելու համար:

Երեք տարի առաջ ընդդիմադիր ուժերը փորձեցին Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ ընտրությունների միջոցով հասնել իշխանափոխության, այո, միայն իշխանափոխության: Այն ժամանակ նրանց շարժումը համաժողովրդական չէր եւ ձախողվեց, որովհետեւ.

-Լեւոն Տեր- Պետրոսյանը այն անձը չէր, ում ժողովուրդը վստահելու էր որպես իսկապես ժողովրդավար եւ կարող մեկի, ով կկարողանար երկիրը ճգնաժամից դուրս բերել:

-Ընդդիմադիր ուժերի ծրագրում չկար երկրի պետական ապարատի վերափոխում, երկրում պառլամենտական հսկողության հաստատում, անկախ դատարանի, անկախ արդարադատության եւ իսկապես անկախ գործադիր մարմինների ստեղծում, որոնք կապահովեին յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները, կպաշտպանեին նրանց շահերը պետական պաշտոնյաների կամայականություններից եւ յուրաքանչյուրին, անկախ նրա հասարակական դիրքից, օրենքի առաջ պատասխանատվության կենթարկեին:

-Չկար ծրագիր երկրում ստեղծելու իսկապես անկախ առեւտրական պալատ, որը կիսկեր եւ հարկ եղած դեպքում կահմանափակեր ոմանց առեւտրական կամ շուկայական մենաշնորհ ստեղծելու ձգտումը, կփորձեր վերացնել տնտեսության մեջ եւ ներքին շուկայում առկա տիրող անարխիան:

-Չկար ազգային ծրագիր՝ դադարեցնելու եւ սահմանափակելու, նույնիսկ արգելելու այն գյուղատնտեսական արտադրանքների ու նաեւ այն ապրանքների ներմուծումը, որոնց տեսակները Հայաստանում արտադրվում են, կամ կարելի կլիներ դրանց արտադրությունը տեղում կազմակերպել: Միջազգային բանկը մի քանի միլիոն դոլար օգնություն տալով պահանջում եւ սիրում է ազատ շուկայական հարաբերություններ: Դա գաղութատիրության նոր ձեւն է մեր օրերում եւ ամենամեծ չարիքը զարգացող երկրների ազգային տնտեսության համար, քանի որ Հայաստանի նման երկրի որեւէ տեխնիկական արտադրանք չի կարող մրցակցել միջազգային շուկաները լցրած զարգացած երկրների արտադրանքի հետ, իսկ հայ գյուղացին ոչ մի հնարավորություն չունի մրցակցելու Ամերիկայի եւ Եվրոպական երկրների բարձր դրամական օժանդակությամբ արհեստականորեն գները իջեցրած գյուղատնտեսական արտադրանքների հետ: Այնուամենայնիվ որեւէ երկրի իսկապես ազգային եւ ժողովրդավար կառավարություն պետք է կարողանա դիմանալ ճնշումներին եւ տեղի չտա:

Մայիսի 28-ի հանրավաքում Լեւոն Տեր-Պետրոսյանն իր ելույթում նշում է. «...Ինչո՞ւ երբեմնի ժողովրդավարության եւ օրինակելի տնտեսական բարեփոխումների կղզի համարվող երկիրը պիտի ընկներ այն օրը, որ աշխարհը նրա հետ խոսեր նման լեզվով, կամ իր ո՞ր մեղքի համար է Հայաստանի քաղաքացին հայտնվել այս նվաստացուցիչ վիճակում»:

Պարոն Տեր-Պետրոսյանը մոռանում է, որ նման կացության հիմքը ինքն ու իր ընկերներն են դրել: Առանց մի պահ կանգ առնելու նա իր ժամանակների տնտեսության մեջ առկա անարխիան, ցաքուցրվածությունը, պետական գույքը ոչ թափանցիկ մեթոդներով եւ անհաշիվ սեփականաշնորհելու պրակտիկան անվանում է «...օրինակելի տնտեսական բարեփոխումներ...» եւ քաղաքական ժամանակավոր վակուումը, սոցիալական բարդ եւ անհաղթ լուծում պահանջող խնդիրների շրջանցումը, անելանելիության մթնոլորտը՝ «...ժողովրդական բարեփոխումներ...»: ՀՀ առաջին նախագահը իր ելույթներում խոսում է ժողովրդավարությունից, դա կարելի է միայն ամբոխավարություն անվանել, որովհետեւ նրա հասկացած ժողովրդավարությունը նշանակում է իշխանափոխություն: Այսինքն՝ Սերժ Սարգսյանին փոխարինելու գա Լեւոն Տեր-Պետրոսյանը կամ մի ուրիշը: Կփոխվի՞ որեւէ բան: Նա շատ լավ գիտի, որ ո՛չ Սերժ Սարգսյանը, ո՛չ ինքը, ո՛չ էլ որեւէ մեկը չեն կարող առանց ժողովրդի մեծամասնությունն իրենց թիկունքում ունենալու եւ վերոհիշյալ անկախ կառույցների առկայության իսկական ժողովրդավարական պետականություն ստեղծել: Ուրեմն այլեւս անիմաստ է խոսել իրենց լավ ցանկություններից եւ նպատակներից՝ մեծահարուստներին սիրել՝ հարգել օրենքները եւ պայքարել պետական ապարատում արմատացած համատարած կաշառակերության եւ պետական աշխատողների չարաշահումների ու կամայականությունների դեմ:

ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Քեռլին, հուլիս, 2011

Կովկասցի ալբանացիները եւ հայկական խաչքարերը

Վերջերս ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում հայկական խաչքարերին նվիրված ցուցահանդեսին առնչված տիեզերական միջադեպի մասին պարզաբանում ստանալու խնդրանքով դիմեցի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Նյու Յորքի գրասենյակի տնօրեն Սյուզան Բիլելլոյին, որը ցուցանմուշներից հայկական պատկանելությունը նշող պիտակների վերացման փաստը մեկնաբանեց այսպես. «Հայաստանը 2006 թվին ստորագրելով ոչ նյութական մշակութային արժեքների պահպանման կոնվենցիան՝ պարտավորվեց ճանաչել այդ արժեքների միջոցով տարբեր ազգային մշակույթների մերձեցումը եւ խթանել միմյանց երկխոսությունը: Մեզ մոտ ընդունված գործելակերպ է, երբ որեւէ երկրի մշակութային ժառանգություն մաս է կազմում մեկ այլ երկրի մշակույթի, ցուցահանդես կազմակերպելուց առաջ մենք պարտավոր ենք խորհրդակցել տվյալ երկրի հետ»: Անշուշտ, Բիլելլոն «մեկ այլ երկրի մշակույթի մաս» ասելով նկատի ուներ Նախիջեւանի տարածքում գտնվող հայկական խաչքարերը, որոնք բարբարոսական ոչնչացումից փրկելու հարցում ՅՈՒՆԵՍԿՕ-ն նույն հետեւողականությունը չցուցաբերեց:

Ոչ միայն սա, եվրոպական հեղինակավոր շատ այլ կազմակերպություններ են այսօր դարձել ադրբեջանական ապատեղեկատվության թիրախ: Ազգային վարկանիշի բարդույթների պատճառով այս երկրի գաղափարախոսներն իրենց անցյալն ամեն կերպ տոհմականացնելու նպատակով մեթոդաբար կեղծում եւ սեփականում են հայոց պատմությանն ու մշակույթին վերաբերող փաստեր:

Այդ շարժման թիվ մեկ գաղափարախոսներից է ազերի արտաքին քաղաքականության գլխավոր խորհրդատուներից մեկը՝ Իլգար Մամեդովը, որը երկար տարիներ եղել է Ավստրիայում Ադրբեջանի դեսպանը, մասնագիտությամբ պատմաբան է եւ իրավաբան: Երկու տարի առաջ նա ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի խորհրդականն էր եւ հաճախակի էր մասնակցում նյույորքահայության կազմակերպած մջոցառումներին: Ես նրան հանդիպեցի Կոլումբիա համալսարանում՝ Հայաստանի ներքին քաղաքական խնդիրներին նվիրված մի կոնֆերանսի ժամանակ, երբ թղթակցում էի «Ամերիկայի ձայն» հեռուստաընկերությանը: Ընդմիջմանը խոսափողն ուղղեցի նրան՝ Նախիջեւանում հայկական խաչքարերի ոչնչացման փաստի մասին պարզաբանում ստանալու համար: Մամադովի պատասխանը ցնցող էր իր պատմական նորահայտությամբ.

Իլգար Մամեդով

«Ես մասնագիտությամբ պատմաբան եմ,- ասաց նա,- եւ գիտեմ որ Նախիջեւանի, ինչպես նաեւ՝ Ղարաբաղի տարածքում ապրել են կովկասցի ալբանացիներ: Նրանք եղել են քրիստոնյաներ, ստեղծել են խաչքարեր, որոնք տարբերվում են հայկական խաչքարերից: Կովկասցի ալբանացիների գերեզմանոցը Նախիջեւանում մ.թ.ա. 4-րդ հազարամյակից մինչեւ մեր թվականության 8-րդ դարի հնություն ունի: Ինչ վերաբերում է Նախիջեւանի հայկական գերեզմանոցին, ապա այն 19-րդ դարի երեւույթ է: Ադրբեջանցիները հայկական խաչքարեր չեն ոչնչացրել: Ես դիտել եմ այդ տեսաժապավենը, որից նման եզրահանգման գալ չի կարելի: Այս հարցով Եվրոխորհրդի հանձնաժողովը պետք է գար Նախիջեւան եւ Լեռնային Ղարաբաղ, սակայն հայկական կողմը դեմ եղավ այդ այցին»:

Մամեդովը նկատի չուներ այսօր Եվրոպայի կենտրոնում ապրող ալբանացիներին (թերեւս ո՞վ գիտի), որոնց հետ ադրբեջանցիները եվրոտեսիլյան «ֆլիրտների» մեջ են: Խոսքը ներկայիս լեզգիների մասին էր, որոնք, ըստ Վիկիպեդիայի տվյալների, նախկինում կոչվել են կովկասցի ալբանացիներ: Ահա նրանց մշակույթին է նաեւ ցանկանում հավակնել Ադրբեջանը: Դարեր առաջ, երբ աշխարհի քարտեզին գոյություն չուներ «Ադրբեջան» աշխարհագրական անունը, ըստ հայ պատմագրական աղբյուրների՝ լեզգիների նախնիները ապրել են պատմական Ուտիքում կամ Աղվանքում, ինչը նույնպես մաս է կազմել հայոց քաղաքակրթության: Սակայն այս մասին գիտական խոր հիմնավորումները թողնենք պատմաբաններին եւ հնագետներին:

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նյու Յորք

ԱԶԳ **Միջազգային**

Մի դատիր, որ չդատվես

Ժամանակ առաջ հայտնի էր դարձել, որ ՀՀ ՊՆ «Իլ-76»-ը վթարային վայրէջք է կատարել ՌԴ Վոլգոգրադի մարզի օդանավակայաններից մեկում: Նման դատահարներից աշխարհում ոչ ոք առահովագրված չէ: Իսկ այդ-պիսի դեպքերում էլ լրատվամիջոցները ցուցաբերում են հարկավոր զսպվածություն: Խոսքն, իհարկե, քաղաքակիրթ երկրների մասին է:

Ադրբեջանում, մինչդեռ, նախ այդ լուրն ընդունեցին վատ ողջակիզված հաճույքով՝ «իսկ եթե ինքնաթիռն ուղղակի կործանվել է, բայց այդ մասին չեն ասո՞ւմ», ապա անցան «անատոմիական դարզաբանումների» ժանրին: Ոչ անհայտ Նուրանին «Էխո»-ում մի ծավալուն հրաղարակում էր արել, որի հիմնական հարցադրումն այն էր, թե «ի՞նչ գործ ունի հայկական զինված ուժերի ինքնաթիռն Ռուսաստանում»: Ինքն էլ «դատապարտելով» հարցադրմանը, խանում- լրագրողուհին «դարձել էր, որ «Իլ-76»-ն Ռուսաստանից ռազմական բեռներ էր տեղափոխում՝ օգտագործելով Իրանի օդային տարածքը»:

Մի խոսքով՝ «փոքորիկ մի բաժակ ջրում», քանի որ «Էխո»-ի հեղինակն իր «հետաքննությունն» ավարտել էր հռետորական հարցմամբ. «Իսկ այդքանից հետո ի՞նչ արժեն իսլամական համերաշխության մասին իրանական մոլլաների շաղակրատանքները»: Հայկական ինքնաթիռի վթարային վայրէջքն, այսպիսով, ադրբեջանական կողմի համար դարձել էր «գյուտ»: Այն էլ՝ Իրանի խորհրդարանի խոսնակ Լարիջանիի՝ Բաքու այցելության նախօրեին:

Եվ ահա, կարծես ի հեճուկս Նուրանիի եւ նրա «հետաքննության» դատվիրատուների, հայտնի է դարձել, որ հուլիսի 5-ին Աֆղանստանում ադրբեջանական բեռնատար ինքնաթիռ է կործանվել: Այդ մասին, սակայն, ադրբեջանական կողմը որեւէ պաշտոնական հաղորդագրություն չի տարածել: Բաքվի լրատվամիջոցներն աղետի մասին խոսում են՝ հղում անելով ռուսաստանյան «ՌԻԱ» գործակալությանը:

Ուշադրության է արժանի նաեւ այն, որ, ըստ ադրբեջանական մամուլի, կործանված ինքնաթիռը դատկանել է ոչ թե պաշտպանական գերատեսչությանը, այլ՝ «Ազալ» ՓԲԸ-ին, որը, սակայն, ՆԱՏՕ-ի ռազմական բեռներ էր տեղափոխում Աֆղանստան»:

Սա բավական կասկածելի է թվում: ՆԱՏՕ-ն Աֆղանստան բեռներ տեղափոխելու համար հազիվ թե դիմեր «Ազալ» քաղաքացիական ավիաընկերությանը: Տրամաբանական է թվում, որ եթե կործանվածը քաղաքացիական բեռնատար ինքնաթիռ է, ապա այդ թռիչքը որեւէ կապ չպետք է ունենա դեպի Աֆղանստան ՆԱՏՕ-ի բեռնափոխադրումների հետ: Իսկ եթե, այնուամենայնիվ, ինքնաթիռը ՆԱՏՕ-ական բեռ էր փոխադրում, ապա այն դատկանել է Ադրբեջանի պաշտպանության նախարարությանը:

Բաքվում անցկացված «աննախադեմ զորահանդեսից» հետո, որի ընթացքում, ի դեպ, ցուցադրվել է նաեւ «ռազմաօդային ուժերի բարձր դատրաստվածությունը», Ադրբեջանն, իհարկե, պետք է աշխատի թաքցնել ՊՆ ենթակայության բեռնատար ինքնաթիռի կործանման փաստը՝ հույս ունենալով, որ այդ մասին կլռեն նաեւ դատահարին հաջաստեղյակ մյուս շահագրգիռ կողմերը:

Բայց փաստը մնում է փաստ. վերջին մի քանի տարում սա առնվազն հինգերորդ դեպքն է, երբ ադրբեջանական զինված ուժերն օդուժի կորուստներ են ունենում: Ավելի վաղ մարտական ինքնաթիռ էր խորտակվել հենց Բաքվի մերձակայքում՝ ընկնելով Կասպից ծովը: Մինչ այդ ադրբեջանական օդուժը երկու ինքնաթիռ էր կորցրել Շամքորի եւ Գանձակի հենակայաններում: Այդ առթիվ նույնիսկ տեղական փորձագետներն էին աղմկել, թե «Ադրբեջանն արտերկրից գնում է ֆիզիկապես եւ բարոյապես մաշված ինքնաթիռներ»: Լուրջ մեղադրանքներ էին հնչեցվել ռազմաօդային եւ ՀՕՊ ուժերի հրամանատար Ռաիլ Ռզաեւի հասցեին, որից քիչ ժամանակ անց վերջինս իր տան մոտ սպանվել էր «անհայտ անձի» կողմից:

Ռաիլ Ռզաեւի սպանության գործով հետաքննությունը որեւէ արդյունքի առ այսօր չի հասել: Այդուհանդերձ, ընդդիմադիր մամուլում եղան հրապարակումներ, ըստ որոնց՝ «Ադրբեջանի ռազմաօդային ուժերի բեռնատար ինքնաթիռները չարտերային թռիչքներ են իրականացնում դեպի աշխարհի ամենատարբեր երկրներ, իսկ դրանց դիմաց հասույթն անձամբ տնօրինում է պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը»:

Չպետք է բացառել, որ հուլիսի 5-ին կործանված ինքնաթիռը նույնպես չարտերային թռիչք էր իրականացնում: Իսկ թե ինչ բեռ էր տանում եւ, որ ավելի կարեւոր է, ի՞նչ էր բերելու Աֆղանստանից՝ դա, ամենայն հավանականությամբ, գաղտնիք էլ կմնա. աղետը տեղի է ունեցել «ծովի մակարդակից 3 800 մետր բարձրության վրա, ինքնաթիռը բախվել է լեռնազանգվածի»:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը երդման հարցում շարունակում է բոյկոտը

Նպատակը ինչպես նորընտիր Մեջլիսին, այնպես էլ Էրդողանի նոր կառավարությանը դժվարությունների առջեւ կանգնեցնելն է

Երեկ Անկարայում Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ իր անդրանիկ նիստը գումարեց նախարարների նորաստեղծ խորհուրդը: Նախորդ օրը Թուրքիայի վարչապետը նախագահ Աբդուլլահ Գյուլին էր ներկայացրել կառավարության կազմը եւ արժանացել հավանության: Էրդողանի նոր կառավարությունում, ի տարբերություն նախորդ երկուսի, այլեւս պետնախարարներ չկան: Նրանց փոխարինում են 4 փոխվարչապետներ: 21-ի է կրճատվել նաեւ նախարարների թիվը: Նախարարների խորհրդի անդամները, վարչապետը ներառյալ, 26-ն են:

Նախորդ կառավարությունից 7 նախարար խորհրդի կազմից դուրս են մնացել, այդ թվում՝ նախկին նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի մերձավորներից Վեջդի Գյոնուլը, որը զբաղեցնում էր պաշտպանության նախարարի պաշտոնը: Կառավարության կազմում ընդգրկվել են 6 նոր անուններ: Փոխվել է 3-ի տեղը: Մնացածը պահպանել է զբաղեցրած պաշտոնը, ինչպես ասենք, փոխվարչապետ Ալի Բաբաջանը, Եվրոմիության հարցերով պատասխանատու նախարար Էգեմեն Բաղիշը, մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Էրթուղրուլ Գյունայը, որոնք եղել են իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հիմնադիր կազմի անդամներ, ինչպես նաեւ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն:

Թուրքիայի ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը հունիսի 12-ի ընտրություններում ստացել է 550 պատգամավորական տեղերից 327-ը: Դա միանգամայն բավարար է, որ Էրդողանի նոր կառավարությունը, որը 61-րդն է Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ, վստահության քվե ստանա ամբողջ դժվարության: Այլ կերպ, վարչապետ Էրդողանը քվեի խնդիր չունի, պարզապես Մեջլիսում ընդդիմադիր գլխավոր ուժը հանդիսացող եւ պատգամավորական 135 տեղ ունեցող Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավորները շարունակում են բոյկոտել երդման արարողությունը:

Թեեւ նրանք Մեջլիսի նիստերին ներկա են լինում, սակայն առանց երդում տալու չեն կարող ելույթի իրավունք ունենալ, ընտրվել հանձնաժողովի անդամ եւ քվեարկել: Սա նշանակում է, որ Էրդողանի կառավարության վստահության քվեն, անկախ կանխորոշված արդյունքից, անցկացվելու է առանց Ժողովրդա-հանրապետական կուսակցության մասնակցության, թերեւս դրանով էլ դառնալու է թերի: Ըստ երեւույթին այս կուսակցությունը հենց դրա համար էլ շարունակում է համառորեն հրաժարվել երդում տալու պարտականությունից, որը պատգամավորի լիազորությունների ստանձնման սահմանադրությամբ պահանջվող նախապայմանն է:

Երդման արարողությունը բոյկոտելու Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատճառաբանությունը «Էրգենեկոնի» գործով կալանված, սակայն պատգամավոր առաջադրվելուց հետո նաեւ ընտրված երկու ամբաստանյալներն են: Օրենքը չի արգելում կալանավորների առաջադրումը, սակայն ոչ էլ ընտրվելու դեպքում նրանց պարտադիր կալանից է ազատում: Թեեւ Ժողովրդա-հանրապետականի ցուցակներից ընտրված այս երկու անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց վերացնելու պահանջը Բարձրագույն ընտրական խորհուրդն է մերժել, սակայն այս կուսակցությունը մերժման համար մեղադրում է վարչապետ Էրդողանին:

Ինչո՞ւ: Հարցի պատասխանը միանշանակ չէ: Սակայն միանգամայն ակնհայտ է Իսրայելից ուղղորդվող եւ ԱՄՆ-ում քաղաքական ազդեցիկ դիրքեր ունեցող «Նոր պահպանողականների», «Ուղղ սթրիթ ջոռնըլով» հանդերձ Էրդողանի նկատմամբ բացասական վերաբերմունքը, էլ չենք խոսում Իսրայելի կառավարության եւ քաղաքական շրջանակների մասին:

Խնդիրը, սակայն, սոսկ «Նոր պահպանողականները» չեն, այլեւ անգլիական «էկոնոմիստ» եւ «Ֆայնենշլ թայմս» պարբերականները: Դրանք հունիսի 12-ի ընտրությունների նախօրյակին, դիմելով թուրք ժողովրդին, Ժողովրդա-հանրապետական կուսակցության օգտին քվեարկելու կոչ էին արել, որոնց այնուհետեւ «Նյու Յորք թայմսի» գլխավորությամբ միացել էին ամերիկյան թերթերը: Այդ ընթացքում Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուն քարոզարշավի շրջանակներում անցկացվող հանրահավաքի ժամանակ հայտարարել էր. «Եթե ես լինեի Թուրքիայի վարչապետը, ապա ոչ մի նավատորմ չէր մեկնի Գազա, ոչ էլ «Մավի Մարմարա» նավը»:

Եթե այս հայտարարությունը արեւմտյան նշված թերթերի թուրք ընտրողին հասցեագրած կոչի արձագանքն է, ապա պետք է ենթադրել, որ թերթերը հրեական լոբբիի, իսկ Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը Իսրայելի ազդեցության տակ է: Քանի որ կուսակցությունը ընտրություններում չհասավ ակնկալվող արդյունքի, ուստի նրա միջոցով փորձ է արվում խոչընդոտել ինչպես նորընտիր Մեջլիսի, այնպես էլ Էրդողանի նոր կառավարության աշխատանքները:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԻՆՅԱՆ

ՊԱՂԵՍՏԻՆ

«Ֆաթհ». ՄԱԿ-ում Պաղեստինի չճանաչվելը կհրահրի հակահրայելական ահաբեկչություններ

Պաղեստինյան «Ֆաթհ» խմբավորման պաշտոնական ներկայացուցիչը նախազգուշացրել է, որ եթե ՄԱԿ-ը չճանաչի Պաղեստինի պետությունը, ապա կարող են վերսկսվել ահաբեկչություններն իսրայելցիների դեմ:

Եվրոպայում «Ֆաթհ»-ի ներկայացուցիչ Զամալ Նազալը «Քոլ Իսրայել» ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարել է, որ ՄԱԿ-ում Պաղեստինի պետության անդամակցության մերժումը կգնահատվի որպես պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի մերժում: Նազալի խոսքերով՝ դա կարող է քաոսային վիճակ ստեղծել ամբողջ Մերձավոր Արեւելքում:

Զամալ Նազալն ասել է. «Կա՛մ Պաղեստինը կդառնա ՄԱԿ-ի անդամ, կա՛մ էլ տեղի կունենա պայթյուն»: Նա ընդգծել է, որ պաղեստինցիները իրենց պետության չճանաչվելը կգնահատեն որպես սեփական իրավունքների համար պայքարի դիվանագիտական, ոչ բռնի եղանակի ձախողում: Նազալը հասկացրել է, որ դրա հետեւանքով հաշտության բանակցությունները կընդհատվեն, իսկ ահաբեկչությունը կվերսկսվի:

Պաղեստինյան ինքնավարության ներկայացուցիչները տարբեր առիթներով ընդգծում են, որ եթե մոտ ժամանակներս չստեղծվի Պաղեստինի պետություն 1967-ի սահմաններով եւ Երուսաղեմ մայրաքաղաքով, ապա 15 տարի հետո Իսրայելը կարժանանա ՀԱՀ-ի բախտին:

«Ազգը» երեկ գրել էր, որ Արաբական պետությունների լիգայի պահանջով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հուլիսի 26-ին քննարկելու է ՄԱԿ-ին Պաղեստինի անդամակցության հնարավորության հարցը:

Բուլղարիան մտադիր է քառակի կրճատել ռուսական գազի գնումները

Բուլղարիայի կառավարությունը որոշել է քառակի կրճատել ռուսական գազի գնումները եւ առաջիկա երկու-երեք տարում հրաժարվել «Գազպրոմի» հետ երկարաժամկետ պայմանագրերից: Մոսկովյան «Կոմերսանտ» թերթը գրում է, որ դրա հետեւանքով «Գազպրոմը» Եվրոպայում կարող է կորցնել եւս մեկ սպառողի: Ավելի վաղ ռուսական գազից հրաժարվել էր Խորվաթիան:

Ներկայումս Բուլղարիան սպառում է տարեկան 2,5 մլրդ խոր. մետր գազ, որից 2 միլիարդը գնում է Ռուսաստանից: Կրճատումից հետո գնվող ռուսական գազի ծավալը կկազմի տարեկան 500 մլն խոր. մետր: Բուլղարիայի էկոնոմիկայի, էներգետիկայի եւ զբոսաշրջության նախարար Տրայչո Տրայկովի խոսքերով, իր երկիրը մտադիր է ռուսական գազի բաժինը կրճատել սեփական հանույթի եւ այլընտրական գնումների հաշվին:

Խոսքը մասնավորապես Բուլղարիայի հյուսիս-արեւելքում գտնվող թերթաքարային գազի հանքավայրերի մշակման մասին է: Մշակման տվյալ նախագծով հետաքրքրվում է ամերիկյան Chevron ընկերությունը, որը խոստացել է հետազոտությունների եւ հետախուզման մեջ ներդնել 3 մլն եվրո: Ի դեպ, բնապահպանները եւ ընդդիմությունը խստիվ քննադատում են Սոֆիայի իշխանությունների այդ նախաձեռնությունը:

Խորվաթիան 2011-ից արդեն դադարեցրել է ռուսական գազի ներմուծումը: «Գազպրոմն» այդ երկրին վաճառում էր տարեկան մոտ 1 մլրդ խոր. մետր գազ: Խորվաթիան «Գազպրոմից» հրաժարվելով՝ եռամյա պայմանագիր է ստորագրել իտալական Eni ընկերության հետ, որից կստանա տարեկան 750 մլն խոր. մետր գազ:

Պ. Ք.

Ռուսաստանն արգելեց Եգիպտոսից սերմերի ներմուծումը

Եվրոմիության օրինակին հետեւելով՝ Ռուսաստանը երեկվանից արգելք է սահմանել Եգիպտոսից մի շարք բույսերի սերմերի ներմուծման վրա, որոնք Եվրոպայում աղիքային սուր վարակի համաճարակ էին առաջացրել: Այս մասին հաղորդում է ՌԴ գլխավոր պետական սանիտարական բժիշկ Գենադի Օնիշչենկոն:

Ինտերֆաքս գործակալությունը մեջբերում է նրա հետեւյալ խոսքը. «Եգիպտական մթերքների ներմուծման արգելք սահմանելով՝ մենք միաժամանակ պահպանում ենք եվրոպական բանջարեղենի ներկրման հատուկ ռեժիմը»:

Երեկվա համարում «Ազգը» գրել էր, որ Եվրոմիությունը մինչեւ հոկտեմբերի 31-ը Եգիպտոսից սերմեր չի ներմուծելու, ինչպես նաեւ եվրոպական շուկայում առգրավելու է բոլոր կասկածելի սերմերը: Միայն Գերմանիայում եւ Ֆրանսիայում աղիքային սուր վարակի հարուցիչ E-coli մանրէով ախտահարվածների թիվն անցնում է 4200-ից, զոհերի թիվը հինգ տասնյակ է:

Ռուսաստանի սահմանած արգելքը տարածվում է մասնավորապես ամսական բողկի, ճակնդեղի, լոբազգիների ընձյուղների, շաքարի ճակնդեղի, բանջարաբույսերի, մանանեխի սերմերի, ձիթատու բույսերի սերմերի ու պտուղների, առվույտի ընձյուղների վրա:

Մեքսիկուհին փորձել է ամուսնուն բանտից փախցնել ճամպրուկի մեջ

19-ամյա մեքսիկուհի Մարիա Արխոնան բանտարկված ամուսնու հետ տեսակցության ժամանակ փորձել է նրան բանտից փախցնել ճամպրուկի մեջ: Կնոջը կանգնեցրել են միայն գլխավոր ելքի մոտ: «Չետումալ» բանտի պահապանները նկատել են, որ կինը նյարդային վիճակում է եւ դժվարությամբ է առաջ տանում անվավոր ծանր ճամպրուկը: Այն բացելով՝ պահապանները տեսել են Մարիայի ամուսնուն՝ Էդվին Վալդեմար Արտյագա Պերեսին, որը միայն վարտիքով էր եւ գուլպաներով:

BBC-ի տվյալներով՝ նա բանտարկված է 20 տարով (չի նշվում, թե որ հանցանքի համար): Նաեւ հաղորդվում է, որ ոստիկանությունը կալանավորել է Մարիա Արխոնային, որը հղի է:

Չիվանու տոնը հայրենի Ջավախքում

Ջավախք աշխարհի չքնաղ Կարծախ գյուղում է ծնվել անզուգական երգասեղծ ու փիլիսոփա աշուղ Չիվանին: Անկախությունից ի վեր գյուղի բլրի լանջին ամեն տարի հուլիսյան արեւոտ մեկ օր թնդում են նրա անկրկնելի մեղեդին, հզոր բառն ու բանը, որն ըմբոխխնելու, նաեւ մեծ աշուղի հիշատակը ոգեկոչելու ու խնկարկելու են գալիս ջիվանիասեր ժողովուրդը, ՀՀ եւ Վրաստանի պետական ու հոգեւոր գործիչներ:

Այս տարի տոնին մասնակցելու նպատակով, հաստելով օվկիանոսը, հազարավոր կիլոմետրեր էր կտրել-անցել Ջավախքի զավակ, Չիվանու երգերի սքանչելի կատարող Լեւոն Իսպիրյանը: Համերգին մասնակցեցին ջավախքցի հանրահայտ դուդուկահար Կամո Սեյրանյանը, Ախալքալաքի Չիվանու անվան աշուղական դպրոցի սաները եւ, ինչպես միշտ, Չիվանու երգերի սքանչելի կատարմամբ՝ «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը՝ պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ: Մեծն Չիվանուն հարգելու էին եկել աշուղներ Հեզիկը, Ռազմարը, Երազը, Ոսկեհուրը, Օնիկը՝ Չիվանուն նվիրված իրենց երգ ու բանով, Հայ աշուղների միության պատվավոր նախագահ, 90-ամյա Շավիղ Գրիգորյանը:

Աժ փոխնախագահ **Սամվել Բալասանյանի** կարծիքով՝ Չիվանու տոնն այն եզակի հանդիսություններից է, որ համախմբում է ողջ հայությանը: Իսկ Ախալքալաքի շրջանի Ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը համոզված է, որ Չիվանու փիլիսոփայական եւ խորիմաստ երգերը մեր ազգի կենսագրությունն ու պատմությունն են՝ որոշակի ժամանակահատվածում:

Վրահայոց թեմի առաջնորդ **Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի** համար սա առիթ է, որպեսզի «զգանք Չիվանու շունչը, քայլենք նրա ոտնահետքերով, արթնք այն զգացումները, որ ունեցել է նա այստեղ»: Սրբազան հայրը կոչ արեց կարծախցիներին՝ վերակառուցել գյուղի՝ 1894-ին կառուցված Սուրբ Կարապետ եկեղեցին, որը տարածաշրջանի միակ բազիլիկ եկեղեցին է՝ հիասքանչ զանգակատնով, որը, ինչպես ասացին տեղացիները, կառուցել են նաեւ գյուղի դպրոցները, Երզրումից եկած Ճորոխյան եղբայրները: Ցավոք, դպրոցներն այսօր նույնպես անմխիթար վիճակում են՝ կարոտ վերանորոգման:

Սրբազան հոր կոչին անմիջապես արձագանքեց ջավախքցի գործարար եւ բարերար **Սոս Սարգսյանը**, որ վերակառուցել է հարեւան՝ իր գյուղի եկեղեցին՝ խնդրելով կարծախցիներին միավորվել եւ հաջորդ տարի Չիվանու տոնի օրը վերաբացել նաեւ Կարծախի եկեղեցին:

Ոգեշունչ ու վարակիչ էր Աժ պատգամավոր, «Վիրահայերի միասնություն» հասարակական կազմակերպության համանախագահ **Տաճատ Վարդապետյանի** ելույթը. «Ժամանակին Չիվանին հայրենիքին շռայլորեն տվել է ամեն ինչ՝ ոգեղեն անհատնում գանձեր, փառք ու արժանապատվություն, իմաստնության դասեր, կենսակերպի խոհ ու խրատ».

Դու այն երկրեն մի՛ հեռանար, հայի ձուն,

Ուր որ նախնիքներեդ հիշատակներ կան,

Մրսած ժամանակդ կխաղես օգուն,

Դեռ մոխրի մեջ թաղված հին կրակներ կան:

Ապա շարունակեց. «Եթե նժարելու լինենք աշուղական արվեստի համաշխարհային փաղանգը, կարծում եմ, որ մեծն կարծախցին նժարներից մեկն իր կողմը պետք է թեքեր... Քաջաց տուն Ջավախք աշխարհը մուսաների ու աշուղների երկիր է... Չիվանու մեծությունը նրանում է, որ նա միշտ ժամանակի մեջ է: Նրա երգը նման է այն գինուն, որը, հնանալով, ավելի է թնդանում, ավելի բուրումնավետ ու ըղձալի դառնում»: Եվ ցանկություն հայտնեց, որ «հանճարեղ երգասաց-բանաստեղծը, ինչպեսեւ Սայաթ-Նովան, ներառվեն դպրոցական դասագրքերում, որ նրանց իմաստուն դասերով սնուցանվեն հայ պատանին ու պարմանուհին: Մանավանդ այսօր, երբ օտարածին հողմեր են ներխուժում մեր ու մեր զավակների հոգիները, երբ թուրֆա-արաբական էժանագին մուղամներ են մատուցանվում ամենուր՝ որպես հայ երգ ու երաժշտություն: Չիվանու քնարը ավերիչ այդ հորձանուտը պատնեշող զորեղ պատվար է, յուրահատուկ հոգեփրկիչ «Նարեկ», ազգային ու համամարդկային ավետարան: Ձանձք ազգովի մնալ այդ ավետարանի մեկնիչն ու հավատավորը, ընթերցողն ու խնկարկուն»:

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր **Արմեն Բայանդուրյանը** հավատացած է, որ Կարծախի այս գեղեցիկ լանջին, եթե ոչ այսօր, ապա վաղը պետք է վազվզեն աղագա փոքրիկ ջիվանիները: Այլապես ո՞ւմ է մնալու Չիվանու «հայրենիքի ջուրը»: Եվ կոչ արեց աղավնու նման բույն դնել հայրենի Պողոսյանի ղեկավարությամբ: Մեծն Չիվանուն հարգելու էին եկել աշուղներ Հեզիկը, Ռազմարը, Երազը, Ոսկեհուրը, Օնիկը՝ Չիվանուն նվիրված իրենց երգ ու բանով, Հայ աշուղների միության պատվավոր նախագահ, 90-ամյա Շավիղ Գրիգորյանը:

Աժ փոխնախագահ **Սամվել Բալասանյանի** կարծիքով՝ Չիվանու տոնն այն եզակի հանդիսություններից է, որ համախմբում է ողջ հայությանը: Իսկ Ախալքալաքի շրջանի Ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը համոզված է, որ Չիվանու փիլիսոփայական եւ խորիմաստ երգերը մեր ազգի կենսագրությունն ու պատմությունն են՝ որոշակի ժամանակահատվածում:

Վրահայոց թեմի առաջնորդ **Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի** համար սա առիթ է, որպեսզի «զգանք Չիվանու շունչը, քայլենք նրա ոտնահետքերով, արթնք այն զգացումները, որ ունեցել է նա այստեղ»: Սրբազան հայրը կոչ արեց կարծախցիներին՝ վերակառուցել գյուղի՝ 1894-ին կառուցված Սուրբ Կարապետ եկեղեցին, որը տարածաշրջանի միակ բազիլիկ եկեղեցին է՝ հիասքանչ զանգակատնով, որը, ինչպես ասացին տեղացիները, կառուցել են նաեւ գյուղի դպրոցները, Երզրումից եկած Ճորոխյան եղբայրները: Ցավոք, դպրոցներն այսօր նույնպես անմխիթար վիճակում են՝ կարոտ վերանորոգման:

Սրբազան հոր կոչին անմիջապես արձագանքեց ջավախքցի գործարար եւ բարերար **Սոս Սարգսյանը**, որ վերակառուցել է հարեւան՝ իր գյուղի եկեղեցին՝ խնդրելով կարծախցիներին միավորվել եւ հաջորդ տարի Չիվանու տոնի օրը վերաբացել նաեւ Կարծախի եկեղեցին:

Ոգեշունչ ու վարակիչ էր Աժ պատգամավոր, «Վիրահայերի միասնություն» հասարակական կազմակերպության համանախագահ **Տաճատ Վարդապետյանի** ելույթը. «Ժամանակին Չիվանին հայրենիքին շռայլորեն տվել է ամեն ինչ՝ ոգեղեն անհատնում գանձեր, փառք ու արժանապատվություն, իմաստնության դասեր, կենսակերպի խոհ ու խրատ».

Դու այն երկրեն մի՛ հեռանար, հայի ձուն,

Ուր որ նախնիքներեդ հիշատակներ կան,

Մրսած ժամանակդ կխաղես օգուն,

Դեռ մոխրի մեջ թաղված հին կրակներ կան:

Ապա շարունակեց. «Եթե նժարելու լինենք աշուղական արվեստի համաշխարհային փաղանգը, կարծում եմ, որ մեծն կարծախցին նժարներից մեկն իր կողմը պետք է թեքեր... Քաջաց տուն Ջավախք աշխարհը մուսաների ու աշուղների երկիր է... Չիվանու մեծությունը նրանում է, որ նա միշտ ժամանակի մեջ է: Նրա երգը նման է այն գինուն, որը, հնանալով, ավելի է թնդանում, ավելի բուրումնավետ ու ըղձալի դառնում»: Եվ ցանկություն հայտնեց, որ «հանճարեղ երգասաց-բանաստեղծը, ինչպեսեւ Սայաթ-Նովան, ներառվեն դպրոցական դասագրքերում, որ նրանց իմաստուն դասերով սնուցանվեն հայ պատանին ու պարմանուհին: Մանավանդ այսօր, երբ օտարածին հողմեր են ներխուժում մեր ու մեր զավակների հոգիները, երբ թուրֆա-արաբական էժանագին մուղամներ են մատուցանվում ամենուր՝ որպես հայ երգ ու երաժշտություն: Չիվանու քնարը ավերիչ այդ հորձանուտը պատնեշող զորեղ պատվար է, յուրահատուկ հոգեփրկիչ «Նարեկ», ազգային ու համամարդկային ավետարան: Ձանձք ազգովի մնալ այդ ավետարանի մեկնիչն ու հավատավորը, ընթերցողն ու խնկարկուն»:

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր **Արմեն Բայանդուրյանը** հավատացած է, որ Կարծախի այս գեղեցիկ լանջին, եթե ոչ այսօր, ապա վաղը պետք է վազվզեն աղագա փոքրիկ ջիվանիները: Այլապես ո՞ւմ է մնալու Չիվանու «հայրենիքի ջուրը»: Եվ կոչ արեց աղավնու նման բույն դնել հայրենի Ջավախքում

ռազաս հողում եւ ոչ թե Աստվածաշնչյան ագռավի նման գնալ ու մոռանալ հայրենիքը:

Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր **Վան Բայբուրդյանը** տեղեկացրեց, որ իրենք գալիս են Խոջիվանից. ծաղիկներ են դրել մեծ աշուղի գերեզմանին: Եվ խնդրեց ջավախքցիներին՝ Կարծախը դարձնել կյանքով առլեցուն, գործուն ուխտատեղի:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր եւ տնօրեն, ջավախքցի **Հովհաննես Այվազյանը**, երախտագիտություն հայտնելով վերակառուցված հրաշալի ճանապարհի համար (ժամանակին կառուցել է Նիկոլայ Երկրորդ ցարը), հիշեց «Աղաբխարում» ֆիլմի գլխավոր հերոսուհուն, որ հարցնում է. «Այս ճանապարհը տաճա՞ր է տանում»: Պատասխանում են. «Եթե տաճար չի տանում, ապա ո՞ւմ է պետք այլեւս այս ճանապարհը»: Իսկ Կարծախը սրբատեղի է անտարակույս:

Ափսոս, որ չկա երբեմնի հարուստ, փառավոր գյուղի աբխույժ, կենսախինդ առօրյան: Գյուղի նախկին բնակիչ **Սերգեյ Մուրադյանը** պատմում է, որ 1958 թվականին գյուղը շուրջ 6000 բնակիչ ուներ եւ երկու դպրոց՝ 800-900 աշակերտով, ամեն տարի 4-5 առաջին դասարան էր բացվում, հաճախ աշակերտներն ուսանում էին երկհերթ: Նույնիսկ երեկոյան ուսուցմամբ դպրոց է եղել: Հիշում է, թե ինչպես իրենց ավարտական դասարանի 24 աշակերտներից 23-ն ընդունվեցին բուհ. հրաշալի մանկավարժներ ունեին, նույնիսկ Մոսկվայի Լոմոնոսովի համալսարանն ավարտած: Հիմա գյուղն ավերակված է, գրեթե դատարկված. գյուղ, որ հայտնի էր բերրի դաշտերով ու վարելահողերով. Մեծ հայրենականի տարիներին 4-5 հարեւան գյուղ է պահել իր մթերքով, իսկ Սարիղամիշի ճակատամարտի օրերին զինվորների ողջ բնամթերքն ապահովել է Կարծախը:

Ափսոս նաեւ, որ Չիվանու ժառանգներից ոչ ոք ներկա չէր տոնին: Հայտնի է, որ նրա թոռնուհին՝ հայտնի ֆիզիկոս տիկին Գրետան, ապրում է Թբիլիսիում:

Եվ ի՞նչ Չիվանու տոն՝ առանց Չիվանու ժառանգության փրկության եւ պահպանման մեծ նվիրյալի, ՀՀ վաստակավոր արհիս, պրոֆեսոր **Թովմաս Պողոսյանի**: Չիվանուն նա իրավամբ համարում է հայ աշուղական ազգային դպրոցի հիմնադիրը: 1885թ. Գյումրիում ընտրվելով հայ աշուղների ղեկավար՝ Չիվանին գչակից ընկերներին կոչ է արել գրել բացառապես մայրենիով:

Թ. Պողոսյանը հպարտ է, որ Չիվանու տոնը մեր ժողովրդին մեկ անգամ եւս համախմբում է. «Ի՞նչը կարող է ավելի գեղեցիկ լինել, քան այն, որ հայ մարդը գիտակցում է Չիվանու արժեքը իր երեխայի դաստիարակության գործում եւ այստեղ հավաքվում ընտանիքներով, գերդաստաններով»: Եվ տեղեկացրեց, որ անսամբլը պատրաստվում է աշնանը «Արամ Խաչատրյան» համերգասրահում մեծ շուքով նշելու Չիվանու ծննդյան 165-ամյակը:

Երկու տարի առաջ Չիվանու մահվան 100-րդ տարելիցին աշուղագետն ընթերցողի սեղանին դրեց Չիվանու անտիպ երգերի ժողովածուն՝ շուրջ 450 ստեղծագործություն: Իսկ ընդհանուր առմամբ մեզ է հասել Չիվանու մոտ 1180 երգ:

Չիվանու՝ որպես համազգային արժեքի գիտակցությունն էր, որ պարտադրել է Թովմաս Պողոսյանին 1997-ին հիմնադրել նաեւ Չիվանու անվան աշուղական դպրոց, որը կրողն ու շարունակողն է ջիվանիական ավանդույթների: Ավելին՝ դպրոցի մասնաճյուղեր բացեց Կոտայքի մարզում (Ջարենցավանում եւ Հրազդանում), Վայոց Ձորի եւ Լոռու մարզերում, Ջավախքում, նպատակ ունի առաջիկայում մասնաճյուղ բացել նաեւ Ստեփանակերտում: Նրա գիտական ողջ գործունեությունը նվիրված է Չիվանու անտիպ գործերին եւ ստեղծագործական ժառանգությանն առհասարակ:

Իսկ Չիվանին թեեւ դառը մանկություն է ապրել՝ 8 տարեկանից մնալով հորեղբոր խնամքին, սակայն երբեք չի հուսահատվել. «Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան»: Նվագել է քյամանչա եւ ջութակ, հասուն տարիքում ստեղծագործել ու աշխատել Գյումրիում ու Թիֆլիսում: 1870-90-ականներին հասարակական մտքի եւ ազգային-ազատագրական շարժման վերելքի տարիներին նրա սիրային, քնարական երգերին փոխարինելու են եկել բողոքի եւ ընդբոստության երգերը: Նա չի երկնչել անգամ Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինին անվանելու «Գայլածին»: Նրա երգերը գրառել են Քրիստափոր Կարա-Մուրզան, Մակար Եկմալյանը, Կոմիտասը, Արշակ Բրուտյանը:

Մեծ հրապարակախոս, փիլիսոփա, բարոյագետ Չիվանու խորիմաստ խրատներն ու խորհուրդները, բերնեբերան տարածվելով ժողովրդի շրջանում, այսօր դարձել են թեւավոր խոսք ու իմաստուն ասույթ:

ՆՎԱՐԴ ԲՈՐՅԱՆ

ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Նշվեց Հայաստանի Ազգային գրադարանի օրը

Հուլիսի 7-ին Հայաստանի Ազգային գրադարանում նշվեց արդեն ավանդական դարձած Ազգային գրադարանի օրը:

Հանդիսավոր բացման ժամանակ գրադարանավարներին եւ մտավորականությանը շնորհավորեց ՀԱԳ տնօրենի ժամանակավոր պատասխանատար Տիգրան Զարգարյանը: Նա նաեւ նշեց, որ Ազգային գրադարանը մեծ դերակատարություն ունի հայկական գրատպության 500-ամյակին նվիրված եւ Երեւանը գրքի միջազգային մայրաքաղաք հռչակելու առթիվ նախատեսվող տոնակատարությունների շրջանակում: Տոնի խորհրդի եւ պատմության մասին հանգամանորեն խոսեց Ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանը: Շնորհավորանքի խոսքեր ասացին Աժ պատգամավոր Արտաշես Շահբազյանը, Մշակույթի նախարարության փոխնախարար Արեւ Սամուելյանը, ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության ներկայացուցիչ Մարիա Դոցենկոն: Վերջինս խոսեց Ազգային գրադարանի հետ համագործակցության մասին, մասնավորապես շեշտեց Դ. Սարգսյանի նախաձեռնությամբ Շրջիկ գրադարանով կատարած այցերը, որի ժամանակ նոր գրականությամբ են համալրվել մարզային, գյուղական գրադարաններ: Ազգային գրադարանի օրվա խորհուրդը կարեւորեցին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն Վարդան Դեւրիկյանը, գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը, բանաստեղծներ Արեւշատ Ավագյանը, Լեւոն Բլբուլյանը, արձակագիր Վանուշ Շերմազանյանը: Լիանա Զուրաբյանը տոնը շնորհավորեց ասմունքով: Ազգային գրադարանի եւ Մշակույթի նախարարության պատվոգրերով եւ շնորհակալագրերով պարգեւատրվեցին ՀԱԳ երկարամյա աշխատակիցներ:

Տոնի առթիվ գրադարանը կազմակերպել էր մի շարք միջոցառումներ, որոնցից ուշագրավ էին նոտաների եւ խազերի, նոր ստացված պատկերագրքերի, ոչ գրքային հրատարակությունների՝ բացիկների, օրացույցների ցուցադրությունները, առանձին ցուցափեղկով ներկայացված էին կոնդակներ: «Հեղինակները մեր ընթերցողներն են», այսպիսի խորագիր էր կրում ցուցափեղկերից մեկը, որտեղ ցուցադրված էին այն գրքերը, որոնք գրվել են Ազգային գրադարանի ընթերցասրահներում, եւ որոնք կրում էին հեղինակների ընծայագրերը: Ցուցահանդեսներից մեկն էլ կրում էր «Շրջակա միջավայր եւ բնապահպանություն» խորագիրը:

Տոնի առթիվ Ազգային գրադարանում անցկացվեց մասնագիտական մամուլի տեսություն, ցուցադրվեցին Ազգային գրադարանի պատմությունը, անցյալը եւ ներկան ներկայացնող տեսանյութեր:

Հայաստանի Ազգային գրադարանի պատմության սկիզբը համարվում է 1832թ., երբ հիմնադրվում է Երեւանի արական գիմնազիայի գրադարանը: Ազգային գրադարանի օրը նշվում է 1999 թվականից:

Ազգային գրադարանի հանրության հետ կապերի եւ միջոցառումների կազմակերպման բաժին

Լիբանանահայ նկարիչ Ժան-Փոլ Կիրակոսեանի հետ

- Ժան-Փոլ, գեղարուեստի ո՞ր դպրոցին հետեւորդ կը համարես դուն-քեզ:

- Արուեստի թէ գեղանկարչութեան գրեթէ բոլոր դպրոցները իրենց ազդեցութիւնը ձգած են արտայայտչական ոճի ստեղծագործութիւններուն վրայ: Ազդուած եմ 30,000 տարի քարանձաւային նկարչութենէն՝ Լասքոյ կամ Ալթամիրա (որ աւելի «նոր»՝ 10,000 տարեկան է...): Ազդուած եմ Վան Գոգէն եւ աւելի առաջ դա Վինչիէն, Քարաբաջիո, Չիոթթօ: Պատմութիւն սորվելով, աշխարհ տեսնելով, Ափրիկէէն ճապոն, ուր ազդուած եմ Շինթօ բուսսիսական գեղանկարչութեամբ: Ինչպէս նաեւ հոս՝ Փօլ Կիրակոսեանէն, որուն աշխատանքի հարազատութեան մէջ մեծցած եմ:

- Որո՞նք են ծրագիրներդ ու նպատակներդ գեղարուեստի մէջ, որպէս մեծ արուեստագէտի զաւակը:

- Ամէն արուեստագէտ կը ցանկանայ հասնիլ ամենէն բարձր տեղը...: Բայց ես չեմ տառապիր հասնելու համար, այլ կը գծեմ ու նկարեմ, որովհետեւ արեւնս մէջ կայ...: Ամէն ինչ ըրի որ նկարիչ չըլլամ, բայց ինչպէս որ կը շնչես, կը ճաշես, թմրեցուցիչի նման՝ պէտք է նկարեմ, որ հանգիստ ընեմ...: Փոքր տարիքէս բարդոյթ ունէի գեղանկարչութեան հանդէպ, որովհետեւ հայրս կար եւ բոլորը կը հարցնէին, թէ ե՞ս ալ նկարիչ պիտի դառնամ: Կարեւորը դրամ շահիլը չէ, ուրիշ ասպարէզներ ալ կային այդ հարցը լուծելու: Կարեւորը դրամը չէ, այլ հոգեկան ու մտաւոր հանգիստն է:

- Միջազգային թէ հայկական գեղանկարչութեան ո՞ր դէմքերն են որ կը խօսին սրտիդ:

- Իբրեւ արուեստագէտ՝ ամէնքը կը սիրեմ: Ամէն մէկը իր աշխարհն ու ձեւը ունի արտայայտչութեան: Ես անոնցմէ կը սորվիմ եւ ոչ թէ կընդօրինակեմ: Կը փորձեմ անոնց աշխարհը բաղդատել իմ աշխարհիս հետ եւ ընդհանուր յայտարար մը գտնել: Իբրեւ հայ արուեստագէտ, փոքր տարիքէս կը ճանչնամ Մինաս Աւետիսեանը: Ամէնօրեայ տրամադրութիւնն ալ մեծ դեր ունի ստեղծագործութեան մէջ: Օրինակ, երբ կը տեսնեմ բազմաթիւ հայեր, որոնք թրքական ադրանք կը գնեն եւ թրքերէն երգեր կը լսեն, ատիկա նեղութիւն կը պատճառէ ինծի: Շատ շուտ մոռցան, որ իրենց նախնիները զոհ գացին Եղեռնին: Առաւել եւս, ջարդարարը կ'ըսէ, թէ ինքը բան մը չէ ըրած, այլ՝ ինքնապատասխանատուութիւն ըրած է մեր դեմ... Ապա եւ անոնք որոնք, դրամ կու տան ջարդարարին եւ կ'ըսեն, թէ այդ հին սերունդը վերջացաւ, ապա եւ ան հայութենէն դուրս կու գայ եւ իր գոյնը կը փոխէ:

- Բեյրութի մէջ կազմակերպուած այս ցուցահանդէսդ քանիերո՞րդ է եւ այս առիթով ի՞նչ կը ցանկանաս փոխանցել մեր ընթերցողներուն, որպէս նկարիչ-արուեստագէտներու ընտանիքի զաւակ:

- Աշխարհի տարբեր երկիրներու մէջ 29-րդ ցուցահանդէսս է: Մի՛ ընդօրինակեր, այլ նկարէ այն ինչ որ կը զգաս եւ այդ ձեւով է որ յառաջ պիտի երթաս: Եթէ ուրիշին աշխարհը փորձես ընդօրինակել, ապա եւ անծանօթ մթնոլորտի մէջ կը մտնես եւ հոն կը կորուիս: Դո՛ւն ես, տարբեր անձ մը, տարբեր ժառանգական տուեալներով մեծցած: Եթէ առնեմ Փօլ Կիրակոսեան մը եւ «clouning» ընեմ, տարբեր շրջապատի ու մթնոլորտի մէջ, ուրիշ ստեղծագործութիւններ պիտի ստեղծուին...: Այնպէս որ, ամէն արուեսագէտ իր աշխարհը ունի եւ այդ աշխարհին մէջ թող մնայ եւ ստեղծագործէ եւ այնտեղ է որ մեծ յառաջդիմութիւն եւ յաջողութիւններ պիտի արձանագրէ:

Հարցազրոյցը վարեց՝
ՀԱՄՕ ՄՈՍԿՈՓԵԱՆ
Բէյրութ

Գոռ Մինասյանն ուժեղագույնն էր միայն ոլկում վարժությունում

Մալայզիայի Պենանգ քաղաքում ավարտվեց ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունը: Մրցումների վերջին օրը մրցահարթակ դուրս եկավ Հայաստանի 2-րդ ներկայացուցիչը՝ գերծանրքաշային կարգում աշխարհի պատանիների չեմպիոն Գոռ Մինասյանը: Հիշեցնենք, որ մինչ այդ Հայաստանը ներկայացրած Քրիստինե Պետրոսյանը մինչեւ 63 կգ քաշային կարգում գրավել էր 9-րդ տեղը:

Գոռից սպասելիները մեծ էին: Նա գերազանց սկսեց մրցումները՝ ոլկում վարժության 3 մոտեցումներն էլ արդյունավետ օգտագործելով: Գոռը հաջորդաբար բարձրացրեց 170, 175 եւ 178 կգ: Այս արդյունքով հայ ծանրորդը դարձավ ոլկում վարժության հաղթող՝ արժանանալով փոքր ոսկե մեդալի: 17-ամյա հայ պատանին 1 կգ-ով առաջ անցավ իրանցի Բահադուր Մուլաեիից, 4 կգ-ով էլ գերազանցեց ռուսաստանցի Սերգեյ Օրեշնիկովին:



Հայ դյուցազնը լավ նախադրյալներ էր ստեղծել աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար: Սակայն ցավոք հրում վարժությունում նա զիջեց մեդալների համար մղվող պայքարում իր հիմնական հակառակորդներին: Գոռը հրում վարժությունը սկսեց 200 կգ-ից, ապա հաջողությամբ բարձրացրեց 206 կգ: Իսկ 3-րդ մոտեցման ժամանակ նա չկարողացավ հաղթահարել 208 կգ-ը: Իսկ ահա նրա հիմնական մրցակիցները բարձր արդյունքներ ցույց տվեցին: Բահադուր Մուլաեին հրում վարժությունում մրցակցությունից դուրս էր: Նա վարժությունը սկսեց 213 կգ-ից, ապա բարձրացրեց 225 կգ, իսկ 3-րդ մոտեցման ժամանակ գլխավերեւում պահեց 231 կգ-անոց ծանրաձողը: Երկամարտում իրանցի մարզիկը 408 կգ (177+231) արդյունքով վստահորեն նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Արծաթե մեդալակիր դարձավ իրանցի մեկ այլ ծանրորդ՝ Ալիռեզա Կազեմինեժադը՝ 386 կգ (169+217): Գոռ Մինասյանն ու ռուսաստանցի Սերգեյ Օրեշնիկովը ցույց տվեցին միեւնույն 384 կգ արդյունք: Անձնական ավելի թեթեւ քաշի շնորհիվ Օրեշնիկովին բաժին հասավ բրոնզե մեդալը, իսկ Գոռը գրավեց 4-րդ տեղը:

Այսպիսով, աշխարհի երիտասարդների առաջնությունում Հայաստանը նվաճեց ընդամենը մեկ ոսկե մեդալ:

Հերթական դառը հիասթափությունը

«Ուլիսն» ու «Բանանցը» լքեցին Եվրոպայի լիգայի մրցաշարը

Երեկ «Ուլիսն» ու «Բանանցը» ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խաղարկության 1-ին փուլի պատասխան հանդիպումներն անցկացրին: Եվ կրկին հայկական ակումբները մարզասերներին դառը հիասթափություն պատճառեցին առաջին հերթին իրենց անորակ ու դժգույն խաղով: Դա հատկապես վերաբերում է «Ուլիսին», որն առաջին խաղում 0-3 հաշվով «Ֆերենցվարոշին» զիջելուց հետո գործնականում զրկվել էր հաջորդ փուլ դուրս գալու հնարավորությունից, ուստի սեփական հարկի տակ պետք է ձգտեր գոնե արժանապատիվ խաղ ցուցադրել: Սակայն այս անգամ էլ ուլիսցիների կատարմամբ դժգույն խաղի ականատես դարձանք:

Հյուրերը, որոնք առանձնապես չէին ձգտում սրելու խաղը, բավական հաջողությամբ մամլիչ գործողություններ էին կիրառել՝ ուլիսցիներին զրկելով ազատ գործելու հնարավորությունից: Նման պայմաններում դաշտի տերերը չկարողացան որեւէ հակախաղ գտնել: Դա է պատճառը, որ ողջ խաղի ընթացքում ուլիսցիներն ընդամենը մի քանի մտածված գրոհներ կարողացան կազմակերպել, սակայն գոլային իրական պահ ստեղծել այդպես էլ չհաջողվեց: Անկեղծ ասած, նման խաղով դժվար էր գոլ խփել: Իսկ ահա հյուրերն առանձնակի ջանքեր չգործադրելով, 2 անգամ հասան հաջողության ու կրկին խաղադաշտից հեռացան հաղթանակած: 33-րդ րոպեին Աբդի Լիբանը 11մ հարվածով բացեց հաշիվը, խաղավարտին Լորան Օլահը 2-րդ գոլը խփեց: «Ուլիսը» 2-րդ տարին մասնակցեց եվրոգավաթների մրցաշարերին ու կրկին ասպարեզը թողեց առաջին փուլում՝ դարձյալ չգտնելով մրցակցի դարպասի բանալին:

Մարզասերները որոշակի հույսեր էին կապում «Բանանցի» հետ, որը եվրոգավաթներում մրցակցի դաշտում ավելի հաջող է հանդես գալիս: Եվ դա «Բանանցը» կրկին ապացուցեց՝ Ռուսթավիում Մեսալուրգի» հետ հանդիպումն ավարտելով ոչ-ոքի՝ 1-1: Սակայն մեկ շաբաթ առաջ Երեւանում 0-1 հաշվով կրած պարտության պատճառով «Բանանցն էլ դուրս մնաց հետագա պայքարից:

«Բանանցի» ֆուտբոլիստներն էլ ակտիվ խաղով աչքի չընկան: Արդեն 18-րդ րոպեին օգտվելով Արթուր Եդիգարյանի կոպիտ սխալից, Գեորգի Միկաբերիձեն բացեց հաշիվը: Հաջորդ փուլ դուրս գալու համար հյուրերին արդեն հարկավոր էր 2 գոլ խփել: Միայն 72-րդ րոպեին Բանանցին վերջապես հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը, այն էլ 11մ հարվածով, որը հստակ իրացրեց Էդուարդ Դոս Սանթոսը: Խփած գոլից հետո հյուրերն ակտիվացան, սակայն այնքան անհրաժեշտ 2-րդ գոնդակը խփել չհաջողվեց: Թեեւ 76-րդ րոպեին կարող էր աչքի ընկնել Արտակ Դաշյանը, սակայն գոնդակը դիպավ դարպասի հորիզոնական ձողին:

Պովետկինն ու Չագաեւը կվիճարկեն WBA-ի չեմպիոնական գոտին

Օգոստոսի 27-ին Գերմանիայի Էրֆուրտ քաղաքում գերծանրքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի թափուր տիտղոսի համար կմենամարտեն Ալեքսանդր Պովետկինն ու Ռուսլան Չագաեւը: Այդ տիտղոսը թափուր մնաց հուլիսի 2-ին, երբ Դեւիդ Հեյը պարտվեց Վլադիմիր Կլիչկոյին: WBA-ի կարգի համաձայն, եթե բոնցֆամարտիկը բացի այդ վարկածով չեմպիոնական գոտուց նաեւ այլ վարկածներով աշխարհի չեմպիոնի տիտղոսն է կրում, ապա հռչակվում է սուպերչեմպիոն, իսկ տիտղոսը հայտարարվում է թափուր:

WBA-ի դասակարգման ցուցակում ուզբեկ բոնցֆամարտիկ Ռուսլան Չագաեւն առաջինն է, 2-րդ հորիզոնականը զբաղեցնում է ռուսաստանցի Ալեքսանդր Պովետկինը: Այժմ երկու բոնցֆամարտիկների մենեջերները բանակցում են պայմանագրի շուրջը:

32-ամյա Ռուսլան Չագաեւը նախկինում արդեն նվաճել է WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: 2007-ի ապրիլին նա հաղթել էր Նիկոլայ Վալուեւին, սակայն մոտ մեկ տարի վնասվածքի պատճառով ռինգ դուրս չեկավ: Պրոֆեսիոնալ ռինգում նա 27 մենամարտերից 25-ում հաղթել է, 1-ն ավարտել է ոչ-ոքի, կրել է 1 պարտություն: Այդ միակ պարտությունը Չագաեւը կրել է 2009-ին Վլադիմիր Կլիչկոյից, սակայն դա աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մենամարտ չէր, քանի որ դրանից 2 շաբաթ առաջ նա հրաժարվել էր Վալուեւի հետ հանդիպումից, որին էլ տրվել էր չեմպիոնական գոտին:

31-ամյա Ալեքսանդր Պովետկինը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է: Նա շահել է բոլոր 21 մենամարտերը, որոնցից 15-ը՝ նոկաուտով: Վերջին անգամ նա ռինգ է դուրս եկել 2010-ի դեկտեմբերի 18-ին ամերիկացի Նիկոլայ Ֆիրսայի դեմ: Պովետկինի համար Չագաեւի հետ մենամարտը կլինի առաջին լուրջ մրցավեճն աշխարհի չեմպիոնի գոտու համար:

Կրկին գոլազուրկ ոչ-ոքի

Ֆուտբոլի Ամերիկայի գավաթի խաղարկությունում Արգենտինայի հավաքականին ոչ մի կերպ չի հաջողվում բացել գոլերի հաշիվը: Կոլումբիայի հավաքականի հետ խաղում էլ արգենտինացիները Մեսիի եւ Տեւեսի գլխավորությամբ չկարողացան գտնել մրցակցի դարպասի բանալին: Ինչպես եւ բոլիվիացիների հետ մրցավեճում, այս անգամ էլ գրանցվեց գոլազուրկ ոչ-ոքի:

ՍԱՄԲՈ

Երկու մրցանակակիր

Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում անցկացված սամբոյի աշխարհի գավաթի հերթական փուլում, որը նվիրված էր Ալբերտ Ասատխովի հիշատակին, Հայաստանը ներկայացրած ստեփանակերտցի սամբիստներ Մարտին Միրզոյանն ու Աշոտ Դանիելյանն արժանացան մեդալների: Առավել հաջող հանդես եկավ փորձառու Աշոտ Դանիելյանը, որը մինչեւ 82 կգ քաշային կարգում մարտական սամբոյի մրցաշարում հաղթելով իր բոլոր մրցակիցներին, արժանացավ ոսկե մեդալի: Իսկ Մարտին Միրզոյանը (62 կգ) մարզական սամբոյի մրցավեճում գրավեց 3-րդ տեղը:

Արոնյանը կմասնակցի Լոնդոնի մրցաշարին

Դեկտեմբերի 3-12-ը Լոնդոնում անցկացվելիք շախմատի գերմրցաշարին կմասնակցի նաեւ Լեւոն Արոնյանը: Շրջանաձեւ մրցակարգով անցկացվելիք մրցաշարում նրա մրցակիցները կլինեն Մագնուս Կառլսենը, Վլադիմիր Կրամնիկը, Հիկարու Նակամուրան, Վիշվանաթան Անանդը, Մայքլ Ադամսը, Նայջել Շորթը, Դեւիդ Հաուելը: 9-րդ մասնակիցը դեռեւս անհայտ է:

Քանի որ յուրաքանչյուր տուրում մասնակիցներից մեկը խաղից ազատ է լինելու, ուստի նա հանդիսականների համար կմեկնաբանի պարտիաների ընթացքը:

Փամբուկչյանն անդրանիկ պարտությունը կրեց

Վառնայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Վալենտին Փամբուկչյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ սպիտակներով զիջելով Կիպրիան Բերբատովին: 5 տուրից հետո նա 3,5 միավորով 12-րդ տեղում է:

5-րդ տուրն ավարտեց մրցաշարի միանձնյա առաջատարին: Աղյուսակը 4,5 միավորով գլխավորեց բուլղարացի Բորիս Ջաթալբաշեւը, որը պարտության մատնեց ադրբեջանցի Բահրուզ Ռզաեւին: 8 շախմատիստներ 4-ական միավորով հետապնդում են առաջատարին:

Խմբային մրցաշարը կանցկացվի Կիպրոսում

ՈՒԵՖԱ-ի նստավայր Նիոնում տեղի է ունեցել ֆուտզալի Եվրոպայի գավաթի խաղարկության վիճակահանությունը: Մասնակից 49 թիմերը բաշխվեցին խմբերում: Հայաստանի չեմպիոն «Էրեբունին» պայքարը սկսելու է նախնական փուլից: Թիմն ընդգրկվել է G խմբում, որտեղ մրցելու է Կիպրոսի «Օմոնիայի», Ալբանիայի «Ֆլամուրտարիի» եւ ֆրանսիական «Սպորտինգ Կլաբ դը Պարիի» հետ: G խմբի մրցաշարը կանցկացվի Կիպրոսում օգոստոսի 13-21-ը: Գլխավոր փուլի ուղեգիր կնվաճի միայն խմբի հաղթողը, որը 6-րդ խմբում կհանդիպի Սերբիայի «Էկոնոմաց», ուկրաինական «Ուրագան» եւ Իսրայելի «Բեն Գուրիոն» թիմերի հետ:

Շոգի դեպքում խաղերը կանցկացվեն 3 խաղակեսով

Բացառված չէ, որ ՖԻՖԱ-ն թույլատրի 2022-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության կազմակերպիչներին հանդիպումներն անցկացնել 3 խաղակեսով՝ յուրաքանչյուրը 30 րոպե տեւողությամբ: Նման որոշում կարող է կայացվել այն դեպքում, եթե մարզադաշտում օդի բարձր ջերմաստիճանը ֆուտբոլիստների առողջությանը սպառնա:

Հատուկ տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ նախատեսվում է Քաթարի մարզադաշտերում աշխարհի առաջնության հանդիպումների ժամանակ պահպանել 24 աստիճան ջերմություն: Մասնագետների կարծիքով, 24-ից բարձր ջերմաստիճանի դեպքում հնարավոր է ֆուտբոլիստները ջերմային հարված ստանան:

Փխենչխանը 2018-ի ձմեռային օլիմպիադայի մայրաքաղաք

Հարավկորեական Փխենչխանն իրավունք ստացավ անցկացնելու 2018-ի ձմեռային օլիմպիական խաղերը: Այսպիսին են Դուրբանում կայացած ՄՕԿ-ի 123-րդ նստաշրջանում անցկացված քվեարկության արդյունքները: Փխենչխանը գերազանցեց Մյունխենին եւ Անսիին:

Նշենք, որ Փխենչխանն իր թեկնածությունն առաջադրել էր նաեւ 2010-ի եւ 2014-ի ձմեռային օլիմպիադաների անցկացման համար, սակայն պարտվել էր համապատասխանաբար Վանկուվերին եւ Սոչիին: Այնպես որ միայն 3-րդ փորձից հարավկորեական այդ քաղաքը դարձավ ձմեռային օլիմպիադայի մայրաքաղաք: Քվեարկությանը մասնակցած ՄՕԿ-ի 96 անդամներից 63-ն իրենց ձայնը տվել էին Փխենչխանին, 25-ը՝ Մյունխենին, 7-ը՝ Անսիին:

Փխենչխանը 40 հազար բնակիչ ունեցող փոքրիկ բնակավայր է, որը գտնվում է Սեուլից արեւելք:

Լիլում մրցապարեզ դուրս կգան 5 թեթեւատլետներ

Ֆրանսիայի Լիլ քաղաքում մեկնարկող թեթեւ ատլետիկայի աշխարհի պատանեկան 7-րդ առաջնությունում Հայաստանը ներկայացված է 5 թեթեւատլետով: Առաջնությունում մեր հանրապետության մարզական պատիվը կպաշտպանեն եռացատկորդ Լեւոն Աղասյանը, հեռացատկորդ Սաթենիկ Հովհաննիսյանը, վազորդներ Դինա Խուբասերյանը (100 մետր), Սարգիս Կոստանդյանը (100 մետր) եւ Սամվել Գրիգորյանը (400 մետր):

Հայաստանի թեթեւ ատլետիկայի ֆեդերացիայի նախագահ, անվանի հեռացատկորդ, Եվրոպայի ռեկորդակիր Ռոբերտ Էմիյանի ջանքերով մեր մարզիկները մարզիչներ Արսեն Պետրոսյանի եւ Գեղամ Տեր-Գրիգորյանի գլխավորությամբ հունիսի 27-ից Փարիզում ուսումնամարզական հավաք են անցկացրել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ծովարշավ

Երազանքի հոլurs տերը

Արդեն ոչ մեկ անգամ, տարբեր առիթներով հողում կատարելով այս կամ այն աղբյուրներին, հիշատակել եմ, որ Մոսկվայի «Խուդոժեստվենայա լիտերատուրա» հրատարակչությունը թողարկում է իմ երկերի յոթհատորյակը: Երրորդ հատորն ինձ ուղարկել էին Բուենոս Այրես: Ծանրոցն ուշացավ: Երկու օրինակ ստացա Չիլիում: Եվ ահա, մինչ ճանապարհին էինք, լույս տեսավ չորրորդ հատորը, որն ուղարկեցին Հնդկաստան: Այդ մասին ես բոլորովին էլ հենց այնպես չհիշեցի: Այդ հատորում է տեղավորված գիրքս, որը կրում է «Երկնագույն ճանապարհներ» վերնագիրը: Գրվել է այն ժամանակ, երբ Կամչատկայի իմ երկու ընկերների՝ Անատոլի Գավրիլինի եւ Անատոլի Սալնիկովի հետ 1967 եւ 1970 թվականներին երկու փուլով նավարկեցինք «Վուլկան» եւ «Հեյզեր» ինքնաշեն նավակներով: Այն ժամանակ մենք էինք Սիբիրում եւ Վոլգայի ու Դնեպրի միջեւ, անցնելու էինք ոտքով՝ քարշատեղերով: Անձնակազմում, մեզանից բացի, ներգրավված էին երկու պրոֆեսիոնալ առագաստանավորդներ: «Լիտերատուրնայա գազետա»-ն, որ ԽՍՀՄ-ի ամենահարուստ հրատարակություններից մեկն էր, Էստոնիայում առագաստանավ ձեռք բերելու «դոբրո» ստացել էր: Ամեն ինչ արդեն պատրաստ էր: Պետք էր իմանալ թե ինչ երանգում, ակտիվ ու հայտնի անձնավորություն էր Վիտալի Սիրոկամսկին, չզարմանալու համար, թե որքան լավ էին գնում գործերը արդեն նաեւ ԽՄԿԿ Կենտկոմում: Ես արդեն պատրաստվում էի թռչել Տալլին, որպեսզի իմ սիրած տառատեսակով, ինչպես «Վուլկան»-ի եւ «Հեյզեր»-ի վրա, նավի վրա էլ գրեի սիմոնովյան լեգենդար բանաստեղծության վերնագիրը՝ «Ժդի մեզնյա», եւ գրանցման նավահանգիստը՝ «Մոսկվա- «ԼԳ» («Լիտերատուրնայա գազետա»): Մեկնարկը նշանակված էր ապրիլի 22-ին, Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի պատվին: Թե ինչու տարալվեց արդեն պատրաստի նախագիծը, պատմել եմ իմ «Երկնագույն ճանապարհներ» եւ «Առանց մահվան իրավունքի» գրքերում: Կասեմ միայն, որ երբ այդ ահավոր լուրը արցունքն աչքերին ինձ հաղորդեց սովորաբար զուսպ, բոլորովին ոչ սենտիմենտալ Սիրոկամսկին, այդ օրը, իմ ապրած երեսունչորս տարիների մեջ առաջին անգամ զգացի, թե որտեղ է գտնվում սիրտս:

...Իսկ մտաբերեցի այս տխուր պատմությունը ոչ միայն այն պատճառով, որ հոգիս հրճվում է, երբ ձեռքիս բռնած ունեմ ստեղծագործություններիս չորրորդ հատորը (չէ՞ որ դա հեղինակի համար նույնն է, ինչ զավակի ծնունդը), այլեւ, որ «Երկնագույն ճանապարհներ»-ը, թեեւ ավարտվում են երկար սպասված աշխարհաշուրջի ճախողման ակնարկով, այնուամենայնիվ լավատեսական շունչ ունեն: Եվ ես ցանկանում եմ այդ տողերն այստեղ մեջբերել, նախքան նորից մի քիչ կխոսեմ մեր «Արմենիա»-ի մասին. «Իմ ճամփորդական հուշագրություններում եւ ռեպորտաժներում ես հաճախ եմ վկայակոչում մեծ ճանապարհորդներին, մանավանդ՝ ծովագնացներին: Այդ վառ անունների մեջ էր նաեւ խիզախ առագաստանավորդ Վել Հաուելզը, որը «Կուրսը՝ մենություն» աննման գրքում գրում է.«Ժամանակ առ ժամանակ մի մեղմ ու քնքուշ ձայն շշնջում է ինձ, որ ժամանակն է հանդարտվելու: Ասում է՝ այն փաստը, որ դու առագաստանավի հոլurs տեր ես, դեռ ինքնին հիմք չէ շուրջերկրյա նավարկություն ծրագրելու: Բայց այդ ձայնը չի կարող ինձ համոզել»: Ես չեմ կարծում, թե երբեւէ անցանք 32 հազար կիլոմետր խորհրդային Միության գետերով, Սեւ, Ազովի, Բալթիկ ծովերով, բազմաթիվ լճերով, ջրամբարներով, շլյուզներով: Գրքում պատմվում է այն մասին, թե ինչպես էինք մենք բավական հանգամանորեն նախապատրաստվում ԽՍՀՄ-ում առաջին շուրջերկրյա նավարկությանը՝ ակադեմիկոս Ի. Պ. Գերասիմովի (ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտ), խորհրդային Միության կրկնակի հերոս, բեւեռախույզ Ի. Պ. Պապանինի (ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ծովարշավային աշխատանքների բաժին), Ս. Պ. Պավլովի (ԽՍՀՄ Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտե) եւ Վ. Ա. Սիրոկոմսկու («Լիտերատուրնայա գազետա» թերթի գլխավոր խմբագրի առաջին տեղակալ) աջակցությամբ: Այսպես ասած՝ հոգեւոր հովանավորներն էին («սպոնսոր» բառն այն ժամանակներում չէր շրջանառվում) Միխայիլ Շոլոխովը, Վիկտոր Համբարձումյանը, Կորնեյ Չուկովսկին, Սերգեյ Կոնենկովը, Մարտիրոս Սարյանը, Կոնստանտին Սիմոնովը (նավը նրա պատվին կոչվում էր «Սպասիր ինձ»), Պավել Պոպովիչը: Հենց տիեզերագնաց Պավել Ռոմանովիչ Պոպովիչն էր, որ առաջին նամակը գրեց «Լիտերատուրնայա գազետա»-ին, որն էլ դարձավ գործելու ազդանշան: Նամակն սկսվում էր այսպես. «Ես եւ իմ բարեկամ տիեզերագնացները, կարդալով շուրջերկրյա ճամփորդությունների մասին, ամեն անգամ ափսոսանքով ենք նշում, որ քաջարի ներկայացուցիչների մեջ չկան մեր հայրենակիցների անունները»: Երթուղու աշխարհագրական անվանումն առաջարկել էր ակադեմիկոս Գերասիմովը. «Աշխարհամասեր-օվկիանոսներ»: Ուշադրության էր առնվել, որ ճանապարհի ըստ էության ավելի քան քառորդ մասը (միջին հաշվով քառասնական լայնությունները՝ պլյուս-մինուս աստիճաններով) մենք արդեն անցել էինք: Այսինքն խոսքն այն մասին էր, որ «Վուլկան» եւ «Հեյզեր» նավակներով շարունակելու էինք նավարկությունը Արեւմտյան Եվրոպայի գետերով եւ ջրային ուղիներով: Իսկ հետո «Ժդի մենյա» առագաստանավով մտնելու էինք Ատլանտյան օվկիանոս: Հյուսիսային Ամերիկայի Մեծ լճերը եւ գետերն անցնելու էինք նավակներով եւ ապա առագաստանավով Խաղաղ օվկիանոսով հասնելու էինք Կամչատկա, որտեղից տրված էր մեկնարկը: Աննշանակալից հատվածներում, ինչպես արել էինք Սիբիրում եւ Վոլգայի ու Դնեպրի միջեւ, անցնելու էինք ոտքով՝ քարշատեղերով: Անձնակազմում, մեզանից բացի, ներգրավված էին երկու պրոֆեսիոնալ առագաստանավորդներ: «Լիտերատուրնայա գազետա»-ն, որ ԽՍՀՄ-ի ամենահարուստ հրատարակություններից մեկն էր, Էստոնիայում առագաստանավ ձեռք բերելու «դոբրո» ստացել էր: Ամեն ինչ արդեն պատրաստ էր: Պետք էր իմանալ թե ինչ երանգում, ակտիվ ու հայտնի անձնավորություն էր Վիտալի Սիրոկամսկին, չզարմանալու համար, թե որքան լավ էին գնում գործերը արդեն նաեւ ԽՄԿԿ Կենտկոմում: Ես արդեն պատրաստվում էի թռչել Տալլին, որպեսզի իմ սիրած տառատեսակով, ինչպես «Վուլկան»-ի եւ «Հեյզեր»-ի վրա, նավի վրա էլ գրեի սիմոնովյան լեգենդար բանաստեղծության վերնագիրը՝ «Ժդի մենյա», եւ գրանցման նավահանգիստը՝ «առագաստանավի հոլurs տեր», թեեւ կյանքում ամեն ինչ պատահում է: Բայց անգլիացի ծովագնացի բառերը փոքր-ինչ փոխելով կասեմ՝ «Ես ԵՐԱԶԱՆՔԻ հոլurs տերն եմ»:

Իսկ դա, Ասված վկա, արդեն այնքա՞ն շատ է:

Ապրիլ, 1972 թվական

Պետրոպավլովսկ-Կամչատսկի»:

...Այո, իրոք կյանքում ամեն բան պատահում է: Համենայն դեպս մենք այսօր «առագաստանավի հոլurs տերեր ենք»: Եվ կատարում ենք, եթե չասենք՝ ավարտում ենք շուրջերկրյա նավակությունը: Ճիշտ է, դեռեւս չենք ավարտել... Առջեւում հազարավոր ու հազարավոր մղոններ ունենք անցնելու մինչեւ Միջերկրականի ջրերին հասնելը: Իհարկե, հազարավոր մղոնները այն տասնյակ հազարավորները չեն, որ թողեցինք նավախելի հեռեւում: Սակայն հազարավոր մղոնները նույնպես անվերջություն ու հավերժություն են, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Արաբական ծովում եւ Ադենի ծոցում ընթացիկ տարում երկարաժամկետ կանխատեսումով սպասվում է ե՛ւ հանդիպակաց քամու, ե՛ւ հանդիպակաց հոսանքի անհավատալի ակտիվացում: Կարծում եմ, եթե այս ռեպորտաժը գրեր մեր Արիկը, նա ինձ պես պարզունակ չէր արտահայտվի: Նա անպայման նրբագեղ հոլանդերենով կասեր՝ բեյդեվինդ: Ի դեպ, մեր լուսահոգի կոկ Սամվել Սարգսյանը հաճախ էր ասում, որ ծովային տերմինները չթարգմանեմ: Բայց ես, ինչպես ասում եմ՝ շարունակում եմ իմ էջը քշել: Միշտ համոզված եմ եղել, որ պետք է հարգել ընթերցասեր այն անուշիկ ծեր կնոջը եւ այն բարի ծերունուն, որոնք մոլորվում են տերմինների մեջ: Ճիշտ է, Արիկի շուրթերից «բեյդեվինդը» մի տեսակ վեհ է հնչում, քան մի ինչ-որ «հանդիպակաց քամի» խղճուկ բառակապակցությունը: Մանավանդ, որ այնքան էլ ճշգրիտ թարգմանություն չէ: Այդ ամենն, իհարկե, մանրուք է: Շատ ավելի կարեւոր է իմանալ, որ հանդիպակաց քամին ու հանդիպակաց հոսանքը ամենաիսկական գողեր են: Եվ դեռ ավելին՝ պասսատային քամին եւ բնական հոսանքը արդեն «օրենքով գողեր» են: Նրանք յուրաքանչյուր հանգույցից գողանում են երկուական, երբեմն էլ՝ երեքական մղոն: Դե ահա, ինչպե՞ս իմ սիրելի տարեց ընթերցողի համար չթարգմանեմ հենց թեկուզ «հանգույցը»: Ի՞նչ է նշանակում հանգույցից մղոններ գողանալ: Ես վստահ եմ, որ «Կիլիկիա»-ի նավարկությանը նվիրված հատորներից մեկում հաստատ բացատրել եմ, թե դա ինչ է նշանակում: Կրկնելը մեղք չէ: Ծովում արագությունը նշում են «հանգույց» տերմինով, որը ոչ թե երկարության չափ է, այլ արագություն: Մեկ հանգույցը ժամում մեկ ծովային մղոն է (կա նաեւ ցամաքային մղոն): Այսինքն՝ ժամում 1852 մետր: Ջեմ ծուլանա եւ կիաբվեմ վայրկյաններով. մեկ հանգույցը վայրկյանում մոտավորապես 0,51 մետր է: Եվ իհարկե նավում մենք արագությունը հաշվում ենք միայն հանգույցներով:

Եվ այսպես, Սուրաբայայից մինչեւ Սինգապուր եւ ապա մինչեւ Կումարի հրվանդան, այսինքն Հինդուստան թերակղզու ամենահարավային վերջավորություն, «Արմենիա»-ին ուղեկցում էր հանդիպակաց քամին՝ 30-40 հանգույց միջին արագությամբ: Եվ մեր միակայմ շլյուզի հետ կատարվեց այն, ինչ նման դեպքերում բոլորի հետ է կատարվում: Չմոռանանք եւ այն, թե ինչպիսի անհավանական տարածություն է հաստատել արդեն անցնել մեր առագաստավոր մարզանավը, եւ մեծ մասամբ՝ արտակարգ պայմաններում:

Փոքրիկ էխսկուրս: Սուրաբայայում մեզնից ոչ հեռու կանգնած էր խանմետրանոց մարզանավ՝ ինտերնացիոնալ անձնակազմով. երկու իտալացի, ֆրանսիացի եւ հոլանդացի: Աշխատանքային լեզուն անգլերենն էր: Այն օրը, երբ «Արմենիա»-ն կառանվեց ինդոնեզիական նավահանգստում, այդ քառյակը ճամփա ընկավ: Մեզնից երկու օր առաջ էին հասել Սինգապուր: Խոսքի բռնվեցինք: Մեզ տեղեկացրին, որ ճանապարհի այդ հատվածում իրենց նավն այնպես էր չարչրկվել, որ ստիպված են երկու շաբաթով նորոգման կանգնել: Այնինչ շատողում էին Թայլանդ, Բանգկոկ: Ու ես մտածեցի, որ մենք՝ առավել չարչրկվածներս այս հատվածում ավելի քիչ ենք տուժել եւ շատ ավելի մեծ ու երկարատեւ նորոգման կարիք ունենք: Ես չեմ ուզում արցունք թափել, ախուվախ անել: Կասեմ միայն, որ նորոգման բոլոր աշխատանքները կատարում ենք ընթացքում: Նույնիսկ փոթորկի ժամանակ:

Իհարկե, հնդկական Կոչին նավահանգստում պետք կլինի կանգնել, շունչ առնել ու նայել առաջ: Պետք կլինի մի լավ աշխատել, բայց ավելի շատ մտածել այլ բանի մասին: Այն մասին, թե ինչ է հիմա կատարվում անցնելիք ճանապարհին: Եվ հարցը միայն փոթորիկը, բնական կատակլիզմները չեն, այլեւ մարդու վայրագությունը:

Կյանքը ցույց է տալիս, որ դեռ քիչ է լինել երազանքի հոլurs տեր, առագաստանավի հոլurs տեր, գաղափարի հոլurs կրող, պետք է լինել նաեւ սթափ դատող, իմանալով, որ դժբախտությունից փրկվելու մի ձեւ կա՝ կանխել դժբախտությունը: Վաղուց ասված խոսք կա՝ ծովայինը հույսը ոչ այնքան առագաստի վրա պիտի դնի, որքան իմաստության: Հավանաբար պատահական չէր, որ խորհրդային ժամանակներում անհարգի եւ անխղճաբար ենթադասվող փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեն իր իմաստությունը հենց առագաստի հետ էր համեմատում. «Հանց առագաստ մի դողդոջուն, քշված ոգու փոթորիկից, իմաստությունն իմ սլանում է ծովով, անսանձ իմաստությունն իմ»:

Երկար սպասված Հնդկաստան երկիր: Մենք շատողում էինք այնտեղ, որը օվկիանոսով ողողվող վերջին ափն է «Արմենիա»-ի ճանապարհին: Օվկիանոս, որը կրում է իր անունը:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Հնդկական օվկիանոս

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Հ. Աբրահամյան. «Ում մասին մտածում եք՝ նա չի գլխավորելու (ցուցակը)»

Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը երեկ Գյումրի այցելության ժամանակ մի քանի հետաքրքրական արտահայտություններ է արել: Ամերիկյան «Ֆորբս» ամսագրի՝ Հայաստանի տնտեսության գնահատականների մասին նա ասել է, թե վարչապետը պետք է վերաբերմունք դրսեւորի այդ առթիվ (երեկ վարչապետն այդ հարցին անդրադարձել է արդեն). «Եթե այն համապատասխանում է իրականությանը, ասի, որ համապատասխանում է, իսկ եթե ոչ՝ ապա անհրաժեշտ է հերքել»: Մամուլի այն հրապարակումներին ի պատասխան, թե ԱԺ նախագահը չի գլխավորելու ՀՀԿ համամասնական ցուցակը, Հ. Աբրահամյանը նկատել է. «Բայց ում մասին դուք մտածում եք, նա էլ չի գլխավորելու, ասեմ՝ իմանաք: Ուրեմն ցուցակը կգլխավորի հանրապետության նախագահը, որ հանգստանաք բոլորդ, եւ ընդհանրապես գումարելիների տեղափոխությունից գումարը չի փոխվում. ցուցակը ով կգլխավորի, թե չի գլխավորի, այդքան էլ կարեւոր չէ»: Հասկանալի է, որ նա նկատի է ունեցել վարչապետ Տիգրան Սարգսյանին:

Մ. Խ.

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի վարչական տարածքում գործող «Մուշեղ ՀԷԿ» ՍՊԸ-ի Արփա գետի անանուն եւ Սառնաղբյուր վտակներից մակերեւութային ջրային ռեսուրսից 770 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. հուլիսի 14-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է Նարինե Սերյոժայի Ասատրյանին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 66,7 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, «Նոր Նորք» համ., Մոլդովական փող., 50/1 շենք, բն. 41: Մեկնարկային գինը՝ 17520000 ՀՀ դրամ: Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 08.08.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ. ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկություններին, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am:

Հայտարարություն

Սույն թվականի հուլիսի 14-ին, ժամը 12:00-ին ՀՀ Աշտարակի խճ. 9/1 հասցեում տեղի կունենա «Մարտին Սթար» ՍՊԸ կողմից վարձակալած արտադրամասերում նախատեսվող արտադրությունների աշխատանքային նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85, 22-02-18, 22-15-68

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 7.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: